

**ՎՆԱՍԻՑ ԴԵՊԻ ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆ.  
ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ  
ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Դատական մոնիթորինգի արդյունքների վերլուծություն  
միջազգային չափանիշների լույսի ներքո**





Ընդդեմ կանանց նկատմամբ  
բռնության կոալիցիա  
Coalition to stop violence  
against women

Այս հրապարակումը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:



Սեռական Բռնության  
ճգնաժամային  
Կենտրոն

Սույն վերլուծությունը պատրաստվել է «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Հեղինակ՝ Մարիա Վարդանյան

Դիզայն՝ Մերի Մաթևոսյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ</b> .....	<b>4</b>
<b>Ամփոփագիր</b> .....	<b>5</b>
<b>Գլուխ 1.</b> Ներածություն .....	<b>8</b>
<b>Գլուխ 2.</b> Մեթոդաբանություն .....	<b>13</b>
2.1. Դատական նիստերի ձայնագրությունների կիրառումը .....	14
2.2. Էթիկական նկատառումներ. Տուժածի համաձայնությունն ու անձնական տվյալների պաշտպանությունը .....	15
2.3. Դիտարկման գործընթացը և գործերի ընտրությունը .....	15
2.4. Տվյալների վերլուծություն .....	16
2.5. Տվյալների հասանելիություն, տեխնիկական սահմանափակումներ և դրանց ազդեցությունը .....	18
<b>Գլուխ 3.</b> Մշտադիտարկման Նպատակները .....	<b>20</b>
3.1. Վերապրածների նկատմամբ վերաբերմունքի վերլուծությունը դատավարության ընթացքում .....	21
3.2. Համապատասխանություն միջազգային իրավական չափանիշներին .....	22
3.3. Սեռական բռնություն վերապրած անձանց վրա դատավարական գործընթացի հոգեբանական և ընթացակարգային ազդեցությունների վերլուծություն .....	23
3.4. Համակարգային փոփոխությունների խթանում .....	24
<b>Գլուխ 4.</b> Սեռական բռնության գործերի դատական քննությունը. միջազգային չափանիշներ և դատական լավագույն փորձեր .....	<b>26</b>
4.1. Սեռական բռնության՝ համաձայնության վրա հիմնված սահմանումները միջազգային իրավունքում .....	27
4.2. Պետությունների պարտավորությունները սեռական բռնության վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավունքի ներքո.....	29
4.3. Տրավմայի մասին տեղեկացված և զոհակենտրոն դատական պրակտիկաներ .....	33
4.4. Դատական քննության ընթացքում ապացույցների գնահատման չափանիշները .....	36
1) Ցուցմունքի հաստատման համար այլ ապացույցների պահանջի վերացում (Չպահանջվող հաստատում) .....	36
4.5. Տուժողների և մեղադրյալների հարցաքննություն. արժանապատվության և արդար դատաքննության ապահովում .....	38
Հարցաքննության զոհակենտ տեխնիկաները .....	40
4.6. Դատական վերապատրաստում, գենդերային զգայուն բարեփոխումներ և ինստիտուցիոնալ երաշխիքներ .....	41
1) Մասնագիտական վերապատրաստումներ .....	41
2) Գենդերազգայուն դատավարական բարեփոխումներ .....	43
3) Կանոնավոր վերանայում և համապատասխանություն .....	43
4) Կողմնակալության կանխարգելումն ու հաշվետվողականությունը .....	44

5) Բազմադրոտային մոտեցումներ .....	45
6) Անվտանգության ապահովման երաշխիքներ վերապրածների համար .....	46
7) Կանոնավոր վերանայում և համապատասխանություն .....	46

**Գլուխ 5. Սեռական բռնության գործերի դատաքննության համակարգային**

մարտահրավերներ .....	49
----------------------	----

5.1. Ընտրված գործերի համառոտ նկարագիր .....	50
---	----

Գործ 1 .....	50
--------------	----

Գործ 2 .....	50
--------------	----

Գործ 3 .....	50
--------------	----

5.2. Մշտադիտարկման հիմնական արդյունքները .....	50
--	----

5.2.1. Երկրորդային զոհականացում և ընթացակարգային երաշխիքների թերություններ .....	50
--	----

5.2.2. Ուղղակի առերեսում մեղադրյալի հետ .....	51
---	----

5.2.3. Դատավարական հարմարեցումների և մասնագիտացած աջակցության բացակայություն .....	51
--	----

5.2.4. Անբավարար պաշտպանություն անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ .....	52
---	----

5.2.5. Դատավարական ձգձգումներ և դատական համակարգի անարդյունավետություն .....	52
--	----

5.3. Գենդերային խտրականություն և սեռական բռնության վերաբերյալ միջերի վերարտադրում դատարանում .....	53
---	----

1) Հայաստանում սեռական բռնության գործերի դատական մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված միջերն ու կարծրացած ընկալումները .....	53
---	----

<b>Ամփոփում և առաջարկություններ .....</b>	<b>58</b>
---	-----------

<b>Ամփոփում .....</b>	<b>58</b>
-----------------------	-----------

<b>Առաջարկություններ .....</b>	<b>60</b>
--------------------------------	-----------

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԽԿԿ</b>	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա
<b>ԿՆԽՎԿ</b>	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիա
<b>ՄԻԵԴ</b>	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
<b>ՄԻԵԿ</b>	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
<b>ԳՐԵՎԻՈ</b>	Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ
<b>ICTY</b>	ՄԱԿ-ի նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ
<b>ՄՔԴ</b>	Միջազգային քրեական դատարան
<b>ISVA</b>	Անկախ խորհրդատու սեռական բռնության հարցերով
<b>NSVRC</b>	Սեռական բռնության ազգային ռեսուրսային կենտրոն
<b>ՄԻԳՀԳ</b>	ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
<b>ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ</b>	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
<b>ՀՏՍԽ</b>	Հետտրավմատիկ սթրեսային խանգարում
<b>SART</b>	Սեռական բռնության դեպքերին արձագանքող խումբ

# Ամփոփագիր

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում սեռական բռնության գործերով դատական վարույթների համապարփակ, վերլուծական և փաստահեն ուսումնասիրություն, որը դիտարկում է դրանց համապատասխանությունը միջազգային մարդու իրավունքների նորմերին և վերապրածակենտրոն արդարադատության սկզբունքներին:

Սեռական բռնությունը հանդիսանում է գենդերային հիմքով բռնության առավել ծանր դրսևորումներից մեկը և միջազգային իրավունքում ճանաչվում է որպես մարդու իրավունքների խորը և համակարգային խախտում: Երբ դատական համակարգը չի ապահովում դրա պատշաճ քննությունն ու արդարացի կարգավորումը, դա հանգեցնում է անպատժելիության ամրապնդման, տուժողի երկրորդային զոհականացման և հանրային վստահության խաթարման՝ ինչպես դատական համակարգի, այնպես էլ իրավունքի գերակայության նկատմամբ:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիային (ԿՆԽՎԿ), Ստամբուլյան կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին՝ սույն զեկույցը վերլուծում է Հայաստանում գործող դատավարական և իրավական ընթացակարգերը:

Հատուկ տեղ է տրվում կանանց իրավունքների միջազգային օրենսդրության վերլուծության ներառմանը և դիտարկված դատավարությունների մոնիթորինգի արդյունքների համադրությանը՝ բացահայտելով այն իրավական և մշակութային խոչընդոտները, որոնց բախվում են սեռական բռնություն վերապրած անձինք՝ արդարադատության հասանելիության իրենց իրավունքն իրացնելու ճանապարհին:

## Հիմնական դիտարկումներն են՝

### Երկրորդային զոհականացում (վիկտիմիզացիա) և համակարգային ռետրավմատիզացիա

Դիտարկված դատական գործերի դատաքննության ընթացակարգերում հաճախ կիրառվում են հոգեբանորեն վնասաբեր պրակտիկաներ՝ բազմակի հարցաքննություններ, խաչաձև հարցաքննություններ, տուժողին բացահայտորեն կամ անուղղակիորեն մեղադրող մոտեցումներ, ինչպես նաև պաշտպանական միջոցների բացակայություն: Տուժողները հաճախ մնում են առանց հոգեբանական աջակցության, իսկ պաշտպանական միջոցներ, ինչպես օրինակ՝ փակ նիստեր, հեռավար ցուցմունք կամ աջակցող անձի ներգրավում, գործնականում գրեթե չեն կիրառվում:

### Տրավմայի նկատմամբ ոչ զգայուն համակարգ

Իրավապահ և դատական համակարգի դերակատարների մոտ հաճախ բացակայում է տրավմայի և սեռական բռնության հոգեբանության վերաբերյալ մասնագիտական

պատրաստվածությունը, ինչը հանգեցնում է տուժողի վարքի սխալ մեկնաբանության և անհրատեսական սպասումների:

### **Սեռական բռնության վերաբերյալ միջերի և գենդերային կարծրատիպերի վերարտադրություն**

Դատավարությունների ընթացքում նկատվում են տուժողի արժանահավատությունը հարցականի տակ դնող, նրա բարոյականությունը քննադատող և սեռական պատմությունը շահարկող արտահայտություններ, որոնք շեղում են ուշադրությունը մեղադրյալի գործողություններից և արդարադատության իրական նպատակից:

### **Գաղտնիության անբավարար ապահովում**

Չնայած օրենսդրորեն նախատեսված է դատական գործընթացում տուժողի անձնական տվյալների գաղտնիության պահպանումը, մոնիթորինգը վկայում է այն մասին, որ գործնականում այդ դրույթները հաճախ անտեսվում են՝ վտանգի տակ դնելով տուժողի և ամբաստանյալի անվտանգությունը և արժանապատվությունը:

### **Դատավարական ձգձգումներ և դատական համակարգի արդյունավետության բացակայություն**

Դատավարությունները տևում են երկար տարիներ՝ ուղեկցվելով դատավորների, դատախազների կամ պաշտպանների հաճախակի փոփոխություններով, մեղադրյալների՝ դատական նիստերին պարբերաբար չներկայանալու դեպքերով և դատական ծանրաբեռնվածությամբ: Այս ամենը խորացնում է տուժողի հոգեբանական վիճակը և նվազեցնում վստահությունը արդարադատության նկատմամբ:

Չեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում միջազգային չափանիշներին՝ սեռական բռնության գործերով արդար դատավարություն ապահովելու ուղղությամբ: Ներկայացվում են հաջողված փորձառություններ զարգացած երկներից՝ ինչպիսիք են Շվեդիան, Մեծ Բրիտանիան և Կանադան՝ հաստատելով, որ գոհակենսորոն մոտեցումն ու արդար դատավարության սկզբունքը կարող են համատեղ իրագործվել իրավական մշակույթի և քաղաքական կամքի առկայության դեպքում:

### **Հիմնական առաջարկությունները՝**

Ապացույցների հետազոտման վերաբերյալ կանոնների վերանայում՝ բացառելով տուժողի անձնական և սեռական կյանքի պատմության օգտագործումը, ինչպես նաև բարոյական բնութագիրը:

Դադարեցնել ներխուժող հարցաքննությունները և կուսության թեստերի վրա հիմնվելու պրակտիկան, ապահովել տուժողների մասնակցությամբ գործողությունների պատշաճ արձանագրումը հատկապես անչափահասների դեպքերում:

Դատական պրակտիկայում տրավմայի նկատմամբ զգայուն մոտեցման կիրառում՝ ինչպես հարցաքննության, այնպես էլ նիստերի կազմակերպման փուլերում:

Տուժողների համար դատավարական հարմարեցումների ապահովում՝ հեռավար մասնակցության հնարավորություն, աջակցող անձի ներկայություն, պաշտպանություն ուղղակի առերեսումից:

Համակարգային վերապատրաստում բոլոր ներգրավված մասնագետների համար՝ հիմնված գենդերային հավասարության, տրավմայի հոգեբանության, համաձայնության մշակույթի և միջազգային իրավունքի նորմերի վրա:

Ընդհանուր առմամբ, սույն գեկույցը միաժամանակ նպատակ ունի ծառայել որպես իրավիճակի ախտորոշիչ գործիք և գործողությունների ճանապարհային քարտեզ՝ վերափոխելու սեռական բռնության գործերով դատական վարույթների համակարգը Հայաստանում՝ հետվնասող և անպատժելիություն պահպանող միջավայրից դեպի արդարության և պատասխանատվության ամրապնդման հարթակ: Այն կոչ է անում պետական մարմիններին, քաղաքացիական հասարակության կառույցներին և միջազգային գործընկերներին համատեղ ջանքերով ձևավորել այնպիսի իրավական համակարգ, որտեղ տուժողները լռեցված, մեղադրված կամ կրկնակի վնասված չեն լինում, այլ՝ պաշտպանված, հարգված և արժանահավատորեն ընկալված:

## Ներածություն

Սեռական բռնությունը համատարած, սակայն հաճախ անտեսված հանցագործություն է, որն առկա է բոլոր հասարակություններում՝ իրենց ամենօրյա միջավայրերում: Այն գենդերային բռնության առավել տարածված և կործանարար դրսևորումներից մեկն է և միջազգային իրավունքի շրջանակում ճանաչվում է որպես մարդու իրավունքների ծանր և համակարգային խախտում (ՄԱԿ ԳԱ, 1993; ԱՀԿ, 2002):

Սեռական բռնությունը, բացի տուժողներին անմիջական ֆիզիկական և հոգեբանական վնաս պատճառելուց, ապակայունացնում է համայնքները, խորացնում գենդերային անհավասարությունները և խաթարում հանրային հաստատությունների նկատմամբ վստահությունը: Երբ նման գործերը քննվում են դատավարական անբավարար չափանիշներով, դրանք ոչ միայն անպատժելիության մշակույթ են վերարտադրում, այլև հանգեցնում են տուժողների երկրորդային զոհականացմանը:

Համաձայն Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի սուբյեկտ և Եվրոպայի խորհրդի անդամ պետություն, բացառիկ կարևորություն է ներկայացնում, որ սեռական բռնության դեմ պայքարը լինի համալիր՝ ներառելով ինչպես հստակ ու արդիական իրավական սահմանումներ, այնպես էլ դատական վարույթներ, որոնք երաշխավորում են տուժողների արժանապատվության պաշտպանությունը և համահունչ են վերապրածակենտրոն սկզբունքներին:

## Գլուխ 1.

Սույն զեկույցը ներկայացնում է սեռական բռնության երեք գործերի դատական նիստերի մշտադիտարկման համապարփակ վերլուծություն Հայաստանի Հանրապետությունում՝ կենտրոնանալով այն հարցի վրա, թե ո՞րքանով են ազգային դատական պրակտիկան, դատավարական երաշխիքները, դատարանի վարքագիծն ու ապացույցների հետազոտման ձևերը համահունչ միջազգային չափանիշներին: Այս չափանիշները սահմանված են, մասնավորապես, Ստամբուլյան կոնվենցիայում (Եվրոպայի խորհուրդ, 2011), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայում և ԿՆԽՎԿ-ի Ընդհանուր հանձնարարականներում (ԿՆԽՎԿ, 2017), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակում:

Չեկույցը կարևորում է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնագիտացված փորձագիտական մարմինների կողմից մշակված տուժողակենտրոն չափորոշիչները, այդ թվում՝ Սեռական բռնության ազգային ռեսուրսային կենտրոնի (NSVRC), ՄԱԿ-Ի Կանանց կառույցի (UN Women) և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՀԳ) ուղեցույցները: Վերլուծության հիմքում ընկած են նաև Ֆեմինիստական իրավական վերլուծության մեթոդաբանությունն ու դատական մոնիթորինգի արդյունքում կուտակված փաստական նյութը:

Միջազգային մարդու իրավունքների պաշտպանության համակարգը սահմանում է հստակ պարտավորություններ պետությունների համար՝ ոչ միայն սեռական բռնությունը հանցագործություն ճանաչելու, այլև արդյունավետ, մատչելի և տուժողների իրավունքները հարգող դատական արձագանք ապահովելու առումով: Ստամբուլյան կոնվենցիայի 49-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին ապահովել, որ սեռական բռնության գործերով քննություններն ու դատավարությունները իրականացվեն անտեղի ձգձգումներից զերծ և գենդերային զգայունությամբ: ՄԻԵԴ-ն իր նախադեպերում (օր.՝ Aydin ընդդեմ Թուրքիայի, 1997; J.L. ընդդեմ Իտալիայի, 2001) հաստատել է, որ դատավարական արդարության պահանջը պետք է հավասարակշռված լինի: ԿՆԽՎԿ-ի 35-րդ Ընդհանուր հանձնարարականն ընդգծում է, որ դատական համակարգերը պարտավոր են վերացնել իշխանության անհավասարակշռությունը, հաղթահարել գենդերային կարծրատիպերը և կիրառել տրավմայի մասին տեղեկացված գիտելիքի հիման վրա դատավարական մեթոդներ՝ հաշվի առնելով սեռական բռնության առանձնահատկությունները (CEDAW Committee, 2017):

Սեռական բռնության գործերի մոնիթորինգը հանդիսանում է հզոր գործիք՝ գնահատելու թե՛ միջազգային իրավական չափանիշներին համապատասխանությունը, թե՛ տուժողների փաստացի փորձառությունները դատական միջավայրում: Հայաստանի համատեքստում արձանագրված են կառուցվածքային և մշակութային խոչընդոտներ՝ ներառյալ տուժողների ռետրավմատիկացիա, զոհին մեղադրող մոտեցումների կիրառում և դատավարական գաղտնիության ու տուժողի բարեկեցության անբավարար ապահովում: Այս դիտարկումները համահունչ են Ֆեմինիստական քննադատական գրականությանը, որը պատկերացնում է դատարանը ոչ միայն որպես

չեզոք վեճի լուծման հարթակ, այլ՝ որպես գենդերային իշխանական հարաբերությունների վերարտադրության միջավայր (Lees, 1993; Mulla, 2014; Temkin և այլն, 2016):

Մասնագիտական գրականությունում «Դատական բռնություն» կամ «ինստիտուցիոնալ դավաճանություն» հասկացությունները (Smith & Freyd, 2013) արտացոլում են այն վնասները, որոնք կրում են տուժողները, երբ արդարության ակնկալիքով դատարան մուտք գործելով՝ բախվում են անհավատության, անձնական սահմանները հատող հարցումների ինտիմ կյանքի մասին կամ դատավարական թշնամական միջավայրի: Մեռական կյանքի վերաբերյալ անտեղի հարցերը, ագրեսիվ խաչաձև հարցաքննությունները և պաշտպանիչ մեխանիզմների (օրինակ՝ փակ նիստերի կամ աջակից անձանց) բացակայությունը կազմում են այն գործոնները, որոնք, ինչպես նշել է հեղինակ Լիզը (1993), հանգեցնում են «դատական բռնաբարության» երևույթին՝ ընդգծելով որոշ դատավարական փորձառությունների խորը վնասակար և ռետրավճարակազմող բնույթը: Դատական մոնիթորինգը հնարավորություն է տալիս ի ցույց դնել և վերլուծել այդ համակարգային սխալները:

Դատարանը չի գործում մեկուսացված հասարակությունից. այն թաթախված է նույն պատրիարխալ նորմերի և բռնաբարության մասին միջերի մեջ, որոնք ձևավորում են հանրային կարծիքը: Գիտական աղբյուրները փաստում են, որ տուժողների արժանահավատությունը հաճախ գնահատվում է բարոյական կամ գենդերային ենթադրությունների հիման վրա, հատկապես եթե գործը վերաբերում է չամուսնացած կանանց, ԼԳԲՏԶ+ անձանց կամ մարզինալացված համայնքներից տուժողներին (Ehrlich, 2001; Popova, 2021): Հայաստանում «պատվի», «հեզության» և «կուսության» վերաբերյալ հասարակական ընկալումները զգալիորեն ազդում են իրավապահների վերաբերմունքի և դատարանի կողմից ապացույցների գնահատման վրա:

Այս վտանգավոր միտումներն ավելի են սրվում, երբ դատարանները չեն կիրառում գաղտնիության անհրաժեշտ երաշխիքներ: Փակ նիստերի կամ անձնական տվյալների պաշտպանության պարտադիր մեխանիզմների բացակայությունը հաճախ հանգեցնում է տուժողների ինքնության և ինտիմ պատմության բացահայտման՝ նվազեցնելով հետագա հաղորդման հավանականությունը և ամրապնդելով լռության մշակույթը: ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն (Կ. ընդդեմ Սլովենիայի, 2015), դատարաններն ունեն դրական պարտավորություն՝ պաշտպանելու տուժողների անձնական կյանքի իրավունքը դատավարության ողջ ընթացքում, այդ թվում՝ գործի նյութերի գաղտնաբանում, անունների անանունացում և լրատվամիջոցների մուտքի վերահսկում:

Չնայած օրենսդրական փոփոխությունները անհրաժեշտ քայլ են, դրանք ինքնին բավարար չեն: Մեռական բռնության ենթարկված անձանց համար արդարադատության իրական հասանելիությունը ենթադրում է դատավարական մշակույթի բարեփոխում և մասնագիտական կարողությունների զարգացում: Դատավորները, դատախազները և պաշտպանները պետք է համապատասխան գործիքակազմ ունենան՝ ապահովելու արդար և միևնույն ժամանակ՝ զգայուն դատավարություն:

Վերապատրաստման ծրագրերը պետք է ընդգրկեն տրավմայի վերաբերյալ տեղեկացվածություն, հարկադրանքի դինամիկան և տուժողների պաշտպանության վերաբերյալ միջազգային չափանիշներ: Այս մոտեցումը արդեն ներմուծված է սկանդինավյան երկրներում և առաջարկվում է ինչպես ԱՄՆ Սեռական բռնության ազգային ռեսուրսային կենտրոնի (NSVRC 2018), այնպես էլ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC, 2014) կողմից:

Սույն զեկույցը նպատակ ունի ծառայել որպես ճանապարհային քարտեզ՝ ուղղված Հայաստանի դատական պրակտիկաների համապատասխանեցմանը միջազգային պարտավորություններին և տուժողակենտրոն չափորոշիչներին: Իրավական վերլուծության, ֆեմինիստական տեսության և մոնիթորինգի տվյալների համադրությամբ ներկայացվում է դատական գործընթացի համապարփակ պատկերը և դրա համակարգային սահմանափակումները: Չեկույցում ներառված առաջարկությունները միտված են աջակցելու պետական ինստիտուտներին, քաղաքացիական հասարակությանը և միջազգային գործընկերներին՝ ձևավորելու իրավական միջավայր, որտեղ սեռական բռնության ենթարկված անձինք չեն ենթարկվում կրկնակի վնասի իրենց՝ արդարության որոնման ճանապարհին, այլ լսվում են, հարգվում են և վերականգնվում են:

## Գրականության ցանկ

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW Committee). (2017). Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ՝ թարմացնելով թիվ 19 հանձնարարականը: ՄԱԿ: Վերցված է՝ <https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-recommendation-no-35-gender-based-violence>

Եվրոպայի խորհուրդ: (2011). Կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա (Ստամբուլյան կոնվենցիա): Վերցված է՝ <https://www.coe.int/en/web/istanbul-convention>

Ehrlich, S. (2001). *Representing rape: Language and sexual consent*. Routledge.

Lees, S. (1993). Judicial rape. *Women's Studies International Forum*, 16(1), էջ 1–12.

Mulla, S. (2014). *The violence of care: Rape victims, forensic nurses, and sexual assault intervention*. NYU Press.

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (OHCHR). (2020). Փորձագիտական խմբի հանդիպում՝ սեռական բռնությունը որպես մարդու իրավունքների համակարգային խախտում: Վերցված է՝ <https://www.ohchr.org>

Popova, M. (2021). *Sexual consent*. MIT Press.

Smith, C. P., & Freyd, J. J. (2013). Dangerous safe havens: Institutional betrayal exacerbates sexual trauma. *Journal of Traumatic Stress*, 26(1), էջ 119–124.

Temkin, J., Gray, J. M., & Barrett, J. (2016). Different functions of rape myth use in court: Findings from a trial observation study. *Feminist Criminology*, 13(2), էջ 205–226. <https://doi.org/10.1177/1557085116643183>

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա: (1993). Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագիր (A/RES/48/104): Վերցված է՝ <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-violence-against-women>

ՄԱԿ-Ի Կանանց կազմակերպություն (UN Women). (2015). Բռնության մշակույթ և գոհապաշտման մեխանիզմներ: Վերցված է՝ <https://www.unwomen.org>

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC). (2014). Ձեռնարկ՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության գործերով արդյունավետ քրեական հետապնդման վերաբերյալ: Վերցված է՝ <https://www.unodc.org>

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ). (2002). Համաշխարհային զեկույց՝ բռնության և առողջության վերաբերյալ: Վերցված է՝ [https://www.who.int/violence\\_injury\\_prevention/violence/world\\_report/en/](https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/)

## Գլուխ 2.

### Մեթոդաբանություն

Սույն գլուխը ներկայացնում է սեռական բռնության դատավարությունների դիտարկման մեթոդաբանությունը և հիմնավորում է, թե ինչու է ընտրվել հեռավար դիտարկման մեթոդը՝ հիմք ընդունելով դատարանների կողմից իրականացված լսումների ձայնագրությունները՝ դահլիճում ֆիզիկապես ներկա գտնվելու փոխարեն: Բաժինը անդրադառնում է ձայնագրություններին ապավինելու հիմնավորումներին, ապահովված էթիկական չափանիշներին (օրինակ՝ վերապրածների համաձայնությունը և անձնական տվյալների գաղտնիության պահպանումը), դիտարկման հիմքում ընկած իրավական դաշտին (ներառյալ՝ ՀՀ իրավակարգավորումները և միջազգային գործիքները՝ ինչպիսիք են Ստամբուլյան կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի հանձնաժողովի փաստաթղթերը), ինչպես նաև դիտարկման գործնական տարրերին (գործերի ընտրության չափանիշներ, կողավորման մեթոդաբանություն, տվյալների հասանելիություն): Վերջում գլուխը անդրադառնում է դիտարկման ընթացքում առաջացած տեխնիկական սահմանափակումներին՝ ընդգծելով դատավարությունների մշտադիտարկման կարևորությունը՝ որպես օրենսդրական բարեփոխումների և արդարադատության խթանման գործիք:

## 2.1. Դատական նիստերի ձայնագրությունների կիրառումը

Դատական նիստերի ձայնագրությունների կիրառումը՝ դատարանների դահլիճներում տեղում դիտարկման փոխարեն, իրականացվել է գիտակցված որոշմամբ՝ միաժամանակ ապահովելու դատավարության ընթացքի վրա չազդելու սկզբունքի պահպանումն ու մեթոդի գործնական իրագործելիությունը: Դատական դիտարկման ցանկացած նախաձեռնության հիմքում պետք է կանգնած լինի «չմիջամտելու» սկզբունքը, ինչը նշանակում է, որ դիտորդները չեն կարող որևէ կերպ ազդել կամ խաթարել դատական գործընթացը: Դիտարկումն իրականացնելով ձայնագրությունների միջոցով՝ հնարավոր է դառնում լիովին խուսափել ցանկացած միջամտության ձևից. դիտորդը ոչ միայն չի զբաղեցնում ֆիզիկական տարածք դատարանում, այլ նաև չի փոխազդում կողմերի և դատավարության մասնակիցների հետ իրական ժամանակում՝ դրանով բացառելով այն հավանականությունը, որ նրա ներկայությունը կարող է ազդել դատական միջավայրի վրա կամ որևէ կերպ փոփոխել դատավարության ընթացքը: Այս մեթոդը ապահովում է դատարանի անկախության և անաչառության սկզբունքների պահպանումը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով գործերի ընթացքի համակարգված վերլուծություն:

Ձայնագրությունների կիրառումն ապահովեց նաև մի շարք գործնական առավելություններ: Այն հնարավորություն տվեց մեզ ուսումնասիրել մի քանի դատական գործեր տարբեր մարզերից՝ առանց ճանապարհորդության հետ կապված ժամանակային և անվտանգության բարդությունների: Սա հատկապես կարևոր էր այն դեպքերում, երբ դատական նիստերը տեղի էին ունենում կամ տարածապես հեռավոր վայրերում, կամ միաժամանակ՝ տարբեր դատարաններում: Հեռավար դիտարկումը, լսումների ձայնագրությունների միջոցով, հնարավորություն տվեց նյութերին անդրադառնալ հարմար պահերին, անհրաժեշտության դեպքում՝ կանգնեցնել կամ կրկին լսել հատվածները՝ բարձրացնելով վերլուծության ճշգրտությունը՝ ի տարբերություն իրական ժամանակում ձեռագիր նշումներ կատարելու: Այս մոտեցումը խթանում է դիտարկման տվյալների և կողավորման ճշգրտությունը, քանի որ դիտորդները կարող են կրկին լսել կամ վերանայել ցանկացած պահ, պարզելու՝ թե ի՞նչ է իրականում ասվել կամ արվել դատավարության ընթացքում:

Վերջապես, ձայնագրությունների կիրառման որոշումն պայմանավորված էր նաև անվտանգության և զգայունության հետ կապված գործոններով: Դիտորդները հաճախ դիտարկում են ընտանեկան կամ գենդերային հիմքով բռնության գործեր, որոնք կարող են լինել զգացմունքայինորեն ծանրաբեռնված և բարձր զգայունություն ունեցող: Դիտորդի ֆիզիկական ներկայությունը փոքր դահլիճներում՝ հատկապես գյուղական համայնքներում կամ միմյանց լավ ճանաչող բնակչության պայմաններում, կարող էր լրացուցիչ հոգեբանական ճնշում ստեղծել տուժած վկաների, ինչպես նաև դատավորների և դատախազների վրա: Հեռավար դիտարկումը բացառեց հնարավոր ուղղակի բախման կամ վախեցման ռիսկը:

## **2.2. Էթիկական նկատառումներ.**

### **Տուժածի համաձայնությունն ու անձնական տվյալների պաշտպանությունը**

Մեթոդաբանության հիմքում ընկած են եղել էթիկական բարձր չափանիշներ, ինչը հատկապես կարևորվում է սեռական բռնության դեպքեր վերապրած անձանց և այլ խոցելի վկաների ներգրավվածության պայմաններում: Երբ հնարավոր է եղել, տվյալ գործը դիտարկման ընտրանքում ներառելուց առաջ, ստացել ենք տուժածների տեղեկացված համաձայնությունը: Թեև դիտարկված դատավարությունները հիմնականում բաց են եղել հանրության համար, նախագիծը կարևորել է այն հանգամանքը, որ տուժածներն իրավունք ունեն վերահսկելու, թե ի՞նչպես է օգտագործվում իրենց վկայությունը և անձնական փորձառությունը: Հետևաբար, հարգանքի և զգայուն մոտեցման սկզբունքներից ելնելով՝ մենք տեղեկատվություն ենք տրամադրել դիտարկման ընթացքի մասին և ստացել նրանց համաձայնությունը՝ իրենց դատական նիստերի ձայնագրությունները ուսումնասիրելու համար:

Անձնական տվյալների պաշտպանությունն ևս եղել է առաջնահերթություն: Դատական նիստերի ձայնագրությունները պարունակում են անձնական տվյալներ՝ ներառյալ տուժածների, մեղադրյալների և վկաների ինքնությունը և ձայնային տվյալները: Դիտարկման թիմը կիրառել է տվյալների պահպանման խիստ միջոցներ՝ այս տեղեկատվությունը ապահով պահպանելու նպատակով: Բոլոր ձայնային ֆայլերը պահպանվել են անվտանգ համակարգում, և դրանց հասանելիություն ունեցել են միայն ծրագրի կողմից լիազորված աշխատակիցները: Դիտարկումն իրականացնող մասնագետը պարտավորվել է չբացահայտել և չբնորոշել գործերի մանրամասները:

Հանրային զեկույցներում ներկայացված արդյունքները հրապարակելիս թիմը անանունացրել է տուժածների և այլ մասնավոր անձանց անունները և նույնականացնող տվյալները՝ օգտագործելով ծածկագրեր կամ ընդհանրական ձևակերպումներ: Ստամբուլյան կոնվենցիան հստակ պարտադրում է պետություններին ձեռնարկել միջոցներ՝ դատական գործընթացների ամբողջ ընթացքում ապահովելու զոհերի անձնական կյանքի և պատկերի պաշտպանությունը: Չեկույցներում և հրապարակային ներկայացումներում տուժածների ինքնությունը գաղտնի պահելով՝ նախագիծը պահպանել է նշված չափորոշիչները՝ ապահովելով, որ դիտարկման գործընթացը չդառնա տուժողների նկատմամբ խարանի, վրեժի կամ անցանկալի հրապարակայնացման աղբյուր:

## **2.3. Դիտարկման գործընթացը և գործերի ընտրությունը**

Հեռակա դատավարական դիտարկումն իրականացնելու գործընթացը ներառում էր մի շարք մանրամասն պլանավորված քայլեր՝ ապահովելու համար տվյալների համապարփակ և անկողմնակալ հավաքագրում: Նախ նախագիծը հստակ սահմանեց իր շրջանակն ու նպատակները:

Գիտարկման ուշադրության կենտրոնում էին սեռական բռնությանն առնչվող քրեական գործերը՝ որպես առանցքային գործեր նոր իրավական երաշխիքների կիրառման և միջազգային ստանդարտների պահպանման գնահատման համար:

Գործերի ընտրության չափանիշները ձևակերպվել էին այնպես, որպեսզի դիտարկման առարկա դառնան այնպիսի դատավարություններ, որոնք կարող են բացահայտել համակարգային խնդիրներ: Գլխավոր չափանիշներն էին՝

**հանցանքի տեսակը** (սեռական բռնություն),

**դատական վարույթի փուլը** (նախապատվություն տրվեց այն գործերին, որոնք գտնվում էին դատավարության փուլում),

**աշխարհագրական բաշխվածությունը** (ապահովելու համար Հայաստանի տարբեր շրջանների դատարանների ընդգրկումը):

Երբ հնարավոր գործերը նախանշվեցին, թիմը կատարեց նախնական գտում: Այս փուլում դիտարկվում էին գործի հանրային մատչելի փաստաթղթերը կամ ամփոփագրերը (եթե դրանք հասանելի էին, օրինակ՝ դատարանների տեղեկատվական համակարգի միջոցով), որպեսզի գնահատվեր գործի բնույթը և պարզվեր՝ առկա՞ են արդյոք բացառող հանգամանքներ (օրինակ՝ փակ դատավարություն կամ անչափահաս տուժած, ինչը կհաներ գործը դիտարկման շրջանակից):

Արդյունքում ընտրվեց երեք գործ՝ քաղաքային դատարաններից (ներառյալ Երևանը) և մարզերից, ներառյալ թե՛ համեմատաբար պարզ, և թե՛ բարդ դատավարություններ: Ընդհանուր առմամբ դիտարկվել է շուրջ 3 քրեական գործ, ներառյալ 100 դատական նիստի ձայնագրություն:

Ձայնագրությունների հավաքագրումից հետո թիմը անցավ վերլուծության փուլին՝ առաջնորդվելով նախապես սահմանված մեթոդաբանությամբ (ներկայացված է հաջորդ բաժնում): Բոլոր դիտարկումները գրանցվում էին ապահով թվայնացված շտեմարանում՝ ըստ գործերի և նիստերի ժամանակացույցի: Ձայնագրությունների դիտման հետ զուգահեռ, մասնագետը նաև վերանայում էր հնարավոր փաստաթղթերը (օրինակ՝ մեղադրական եզրակացություններ, դատավճիռներ, արձանագրություններ), որպեսզի համապատասխան համատեքստով մեկնաբանի դատարանում տեղի ունեցածը և բացահայտի հնարավոր անհամապատասխանությունները:

## 2.4. Տվյալների վերլուծություն

Մեթոդաբանության առանցքային բաղադրիչը եղել է կառուցվածքային կողավորման համակարգի կիրառումը՝ դատական նիստերի ձայնագրություններից ստացված տեղեկատվության համակարգված վերլուծությունն ապահովելու նպատակով:

Տվյալների վերլուծությունն իրականացվել է միաժամանակ թե՛ քանակական, թե՛ որակական մեթոդներով: Քանակական վերլուծության շրջանակում, բոլոր գործերի կողավորման ավարտից հետո, հավաքագրված տվյալները համախմբվել են օրինաչափությունների բացահայտելու նպատակով: Մասնավորապես հաշվարկվել են հետևյալ վիճակագրական ցուցանիշները.

մոնիթորինգի ենթարկված դատավարություններից քանիսում են արձանագրվել էական ձգձգումներ,

միջին նիստերի քանակը մեկ գործի շրջանակում,

տուժողները իրավաբանական ներկայացուցչություն ունեցե՞լ են, թե ոչ,

դատավորները ի՞նչ հաճախականությամբ են կիրառել պաշտպանիչ միջոցներ (օրինակ՝ տուժողի ցուցմունքը լսելու համար նիստի փակ անցկացում)

Այս մետրիկաները ապահովել են ապացույցների վրա հիմնված պատկերացում՝ այն մասին, թե ինչպես է արդարադատության համակարգը գործնականում արձագանքում սեռական բռնության դեպքերին:

Որակական վերլուծության շրջանակում թիմը մանրակրկիտ ուսումնասիրել է յուրաքանչյուր գործ՝ քանակական տվյալներով հնարավոր չարտահայտվող նրբերանգները պատկերացնելու համար: Գրվել են գործերի ամփոփ նկարագրություններ՝ ընդգծելով ուշագրավ դիտարկումները: Օրինակ՝ եթե որևէ դատավարություն ներկայացնում էր տարածված համակարգային խնդիր (օրինակ՝ երբ տուժողին տրվում էին անհամապատասխան հարցեր նրա անձնական կյանքի վերաբերյալ՝ արտացոլելով գենդերային կարծրատիպեր), այդ դրվագը արձանագրվել է համատեքստի ներքո: Նմանապես արձանագրվել են նաև դրական օրինակներ՝ օրինակ՝ երբ դատավորը տուժողի ցուցմունքի ժամանակ ցուցաբերել է առանձնահատուկ զգայուն մոտեցում: Բոլոր նման վերլուծական պատմությունները խմբավորվել են կրկնվող թեմաների շուրջ՝ բացահայտելու, օրինակ՝ արդյոք տարածվա՞ծ են գոհին մեղադրող մոտեցումները, կամ արդյոք առկա են համակարգային խնդիրներ, օրինակ՝ երբ դատախազները դադարեցնում են հետապնդումը գոհի բողոքից հրաժարվելու դեպքում:

Լավագույն փորձի համաձայն՝ «մոնիթորինգային արդյունքները պետք է հիմնվեն ներքին օրենսդրության և հստակ ձևակերպված միջազգային չափանիշների վրա», որպեսզի դրանք ընկալվեն որպես օբյեկտիվ: Արդյունքում, յուրաքանչյուր հիմնական եզրահանգում ուղեկցվել է հղումով՝ կիրառված օրենքի կամ չափանիշի և համապատասխան դիտարկված դեպքի օրինակի վրա:

Այս մանրակրկիտ կողավորման և վերլուծության արդյունքը եղավ փաստահեն և խորքային պատկեր սեռական բռնության գործերով դատավարությունների իրական ընթացքի վերաբերյալ, ինչը հիմք է հանդիսացել ինչպես արդյունքների մասին գլուխը կազմելու, այնպես էլ՝ պետական մարմիններին ուղղված մեր առաջարկությունների մշակման համար:

## 2.5 Տվյալների հասանելիություն, տեխնիկական սահմանափակումներ և դրանց ազդեցությունը

Չնայած դատավարությունների հեռակա դիտարկումն՝ օգտագործելով ձայնագրություններ, ապահովեց մի շարք առավելություններ, մոնիթորինգային թիմը բախվեց տվյալների հասանելիության և տեխնիկական բնույթի մի շարք խնդիրների, որոնք որոշ չափով ազդեցին դիտարկումների խորության վրա: Այս սահմանափակումների ըմբռնումը կարևոր է՝ նախագիծը արդյունքները համատեքստում ճիշտ գնահատելու համար:

Որոշ դեպքերում ձայնագրությունները տրամադրվել են ուշացումով կամ թերի ձևով: Օրինակ՝ որոշ դատական նիստեր ձայնագրվել էին հատվածաբար, և տեխնիկական խափանումների պատճառով այդ հատվածներից մեկ կամ մի քանիսը կարող էին բացակայել: Նման դեպքերում մասնագետը փորձել է լրացնել բացերը՝ օգտագործելով դատարանի գրավոր արձանագրությունները, երբ դրանք հասանելի էին, սակայն վերջիններս սովորաբար համառոտ են և չեն ներառում խոսքի ամբողջական բովանդակությունը: Այս սահմանափակումները երբեմն խոչընդոտել են որոշ նրբերանգների արձանագրումը, հատկապես այն դեպքերում, երբ կարևոր դատավարական փոխազդեցություն տեղի էր ունեցել ձայնագրված հատվածում:

Տեխնիկական մեկ այլ սահմանափակում էր ձայնագրությունների որակը: Որոշ ձայնային ֆայլեր ունեցել են թույլ ձայն, աղմուկ կամ միաժամանակ խոսող բազմաթիվ անձանց՝ ինչի հետևանքով խոսքի տարբերակումը դժվարացել է: Մասնագետը հարկադրված էր որոշ հատվածներ բազմիցս լսել կամ օգտագործել ականջակալներ՝ ասվածը հստակ ընկալելու համար: Սակայն անգամ նման միջոցառումներից հետո որոշ ցուցմունքներ կամ դատավորի խոսքեր մնում էին անհասկանալի՝ տվյալները նշվում էին որպես «անորոշ», ինչը կարող էր հանգեցնել որոշ խնդիրների թերի ներկայացման: Բացի այդ, ձայնագրությունները չէին փոխանցում ոչ-բանավոր ազդակներ կամ ֆիզիկական վարքագիծ՝ օրինակ՝ պաշտպանանի կեցվածքը կամ տուժողի հուզական վիճակը:

Տվյալների հասանելիության սահմանափակումները տարածվում էին նաև գործի փաստաթղթերի վրա: Թեև մոնիթորինգն իրականացվում էր ձայնագրությունների միջոցով, գործի ամբողջական ընկալման համար հաճախ անհրաժեշտ էր ծանոթանալ գործի նյութերին՝ մեղադրանքներին, ներկայացված ապացույցներին և այլն: Սակայն փաստաթղթերի սահմանափակ հասանելիության պատճառով որոշ դեպքերում վերլուծությունը հիմնվում էր միայն նիստերի ընթացքում ասվածի վրա՝ առանց վճռի կամ մեղադրական եզրակացության հիմնավորման ընթերցման հնարավորության:

Այս տեխնիկական և հասանելիության սահմանափակումների հնարավոր ազդեցությունն ամբողջությամբ հաշվի է առնվել եզրակացություններ կատարելու ընթացքում: Մենք որդեգրել ենք զգուշավոր մոտեցում. եթե որևէ երևույթ հնարավոր էր, բայց տեխնիկական պատճառներով հստակ չէր հաստատվում, մենք կամ հետագա ճշտում ենք իրականացրել (եթե հնարավոր էր), կամ զերծ ենք մնացել վերլուծությունից:

Ամփոփելով՝ չնայած դատական նիստերի հեռակա մոնիթորինգը ունի տեխնիկական բնույթի մի շարք սահմանափակումներ, թիմի կողմից կիրառված խիստ մեթոդաբանությունն ու տվյալների կրկնակի ստուգման մեխանիզմները ապահովել են արդյունքների արժանահավաստությունն ու ամբողջականությունը: Մենք գիտակցում ենք, որ դատավարական դինամիկայի որոշ նրբերանգներ կարող են մնալ դիտարկման տեսախցիկների կամ ձայնագրիչների սահմաններից դուրս: Սակայն հաշվի առնելով առկա ռեսուրսային սահմանափակումներն ու Հայաստանի տարբեր շրջաններում բազմաթիվ գործեր ընդգրկելու նպատակը՝ ձայնագրությունների հիման վրա մոնիթորինգն ընդհանուր առմամբ դիտարկման արդյունավետ մեթոդ էր: Այն հնարավորություն տվեց հավաքել հարստացված և նախադեպը չունեցող տվյալների շտեմարան՝ Հայաստանում սեռական բռնության գործերով դատական վարույթի իրական ընթացքի վերաբերյալ:

## Գրականության ցանկ

Եվրոպայի խորհուրդ (2011): Եվրոպայի խորհրդի կոնվենցիա կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխման և դրա դեմ պայքարի վերաբերյալ (Ստամբուլյան կոնվենցիա), CETS №210, Ստամբուլ, 11.V.2011: (Համապատասխան հոդվածներ՝ 49 և 56): [rm.coe.int](http://rm.coe.int)

Եվրոպայի խորհուրդ (1950): Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ), Հռոմ, 4.XI.1950, Հոդված 6(1)՝ «Արդար և հրապարակային դատավարության իրավունք»: [fra.europa.eu](http://fra.europa.eu)

Human Rights Watch (2022): Չեկուցում՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին (CEDAW). Հայաստան, 83-րդ նստաշրջան: Նյու Յորք: Human Rights Watch: (Պարունակում է առաջարկություններ՝ ընտանեկան բռնության դեմ օրենքների կիրարկման մոնիթորինգի վերաբերյալ): [hrw.org](http://hrw.org)

ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակ (ODIHR) (2010): Վերջնական գեկույց. Դատավարությունների մոնիթորինգի ծրագիր Հայաստանում (ապրիլ 2008 – հուլիս 2009): Վարչավա: ԵԱՀԿ/ԺՄԻԳ: (Ներառում է ծրագրի նպատակները և արդյունքները, ինչպես նաև առաջարկություններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխման ուղղությամբ): [osce.org](http://osce.org)

ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակ (ODIHR) (2012): Դատավարությունների մոնիթորինգ. ուղեցույց մասնագետների համար (թարմացված տարբերակ): Վարչավա: ԵԱՀԿ/ԺՄԻԳ: (Ներկայացնում է դատավարությունների մոնիթորինգի սկզբունքները՝ մասնավորապես ոչ միջամտման և օբյեկտիվության): [osce.org](http://osce.org)

ԵԱՀԿ/ԺՄԻԳ (2020): Տարեկան հանդիպում՝ դատավարությունների մոնիթորինգի վերաբերյալ, 2020 – Ամփոփում: Վարչավա: ԵԱՀԿ/ԺՄԻԳ: (Քննարկում է COVID-19-ի ընթացքում հեռավար մոնիթորինգի հարմարվողական մեթոդները): [osce.org](http://osce.org)

# Մշտադիտարկման նպատակները

Հայաստանում սեռական բռնության վերաբերյալ դատավարությունների դիտարկման նախաձեռնությունն ուղղորդված էր արդարադատության և հաշվետվողականության առաջնության հանձնառությամբ՝ համահունչ միջազգային մարդու իրավունքների իրավունքի պահանջներին: Այն միաժամանակ նպատակ ուներ արձագանքելու այն խորքային համակարգային և ընթացակարգային մարտահրավերներին, որոնց հաճախ բախվում են սեռական բռնություն վերապրածները:

Սեռական բռնությունը ոչ միայն մարմնական ինքնավարության լրջագույն խախտում է, այլ նաև արտահայտում է խորը արմատավորված գենդերային անհավասարություններ: Հետևաբար, նման գործերի դատավարությունների դիտարկումը հանդիսանում է և՛ իրավական, և՛ սոցիալական հրամայական:

Այս գլուխը ներկայացնում է դիտարկման նախաձեռնության հիմնական նպատակները՝ շեշտադրելով հետևյալ առանցքային ուղղությունները.

1. դատավարության ընթացքի գնահատումը և արդար դատաքննության սկզբունքների պահպանումը,
2. ազգային դատական պրակտիկաների համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին (մասնավորապես՝ Ստամբուլյան կոնվենցիա, ՄԻԵԿ, CEDAW),
3. և սեռական բռնության գործերով դատական գործընթացների ուղղակի ազդեցությունը բռնության վերապրած անձանց վրա:

## Գլուխ 3.

### 3.1 Վերապրածների նկատմամբ վերաբերմունքի վերլուծությունը դատավարության ընթացքում

Այս դիտարկման առաջնային նպատակներից մեկը սեռական բռնություն վերապրած անձանց նկատմամբ դատական գործընթացի ընթացքում ցուցաբերված վերաբերմունքի քննադատական վերլուծությունն էր՝ սկսած նրանց առաջին ներկայությունից դատարանում մինչև վերջնական դատավճի հրապարակումը: Դատավարությունը կարող է թե՛ վալիդացնել վերապրածի փորձառությունը և նպաստել նրա վերականգնման գործընթացին, և թե՛ պատճառ դառնալ նոր տրավմատիզացիայի՝ անզգույշ, ներխուժող կամ հակառակորդային վերաբերմունքի հետևանքով:

Գիտական գրականությունը վաղուց զգուշացնում է նման վնասակար փորձառությունների վտանգի մասին: Օրինակ՝ Լիզը (Lees, 1993) կիրառել է «դատական բռնաբարություն» եզրը՝ նկարագրելու այն կրկնակի վիկտիմիզացիան, որին ենթարկվում են վերապրածները դատավարական ընթացակարգերի ժամանակ: Սա ներառում է բողոք ներկայացրած անձանց ազդեցիկ խաչաձև հարցաքննությունը, ինչպես նաև նրանց բարոյականության, վարքագծի կամ սեռական պատմության վերաբերյալ հարցադրումները:

Այդպիսի պրակտիկան արտահայտում է «բռնաբարության մշակույթի» ավելի լայն երևույթը, որն առկա է բազմաթիվ դատական համակարգերում: Դրա արդյունքում վերապրածներն են կրում հավաստիության ծանր բեռը, մինչդեռ պատասխանատվությունն ու քննությունը պետք է ուղղված լինեն ենթադրյալ կատարողին:

Մուլլան (Mulla, 2014) նույնպես փաստում է այն հոգեբանական և հուզական ծանր բեռը, որ վերապրածները կրում են ինչպես դատաբժշկական զննության, այնպես էլ դատարանում ներկայանալու ընթացքում՝ ընդգծելով, որ արտաքինից «չեզոք» թվացող գործընթացները, ինչպիսիք են ապացույցների հավաքագրումը և վկայության տրամադրումը, իրականում կարող են խորացնել վերապրածների անկարողության և անպաշտպանվածության զգացողությունը:

Էստրիչը (Estrich, 1986) իր հերթին քննադատում է այն դատական ակնկալիքը, ըստ որի՝ վերապրածը պետք է ցուցաբերի «ձայրահեղ դիմադրություն» սեռական բռնության ընթացքում՝ իր վկայությունը արժանահավատ համարվելու համար: Չնայած այս մոտեցումը չի համընկնում ժամանակակից գիտական պատկերացումների հետ՝ կապված տրավմայի և համաձայնության հետ, այն, այդուհանդերձ, շարունակում է ազդեցություն ունենալ դատական մտածողության վրա:

Սույն մշտադիտարկման շրջանակում մանրամասն վերլուծության է ենթարկվում դատարանների աշխատանքը՝ ներառյալ դատավորների, դատախազների, պաշտպանների և տուժողների ներկայացուցիչների խոսքի ոճը, դատավարության կառուցվածքը և հարցերի ձևակերպումը: Դիտարկման նպատակն է պարզել՝ արդյոք Հայաստանի դատաիրավական գործընթացները վերաձևակերպվում են՝ ներառելով տրավմայի վերաբերյալ գիտելիքը և վերապրածակենտրոն սկզբունքները: Մասնավորապես, գնահատվում է՝ ապահովվո՞ւմ է արդյոք վերապրածների

արժանապատվությունը, նրանց վկայությանը ցուցաբերվո՞ւմ է պատշաճ հարգանք, և դատարանի դերակատարներն արդյո՞ք ցուցաբերում են իրազեկվածություն և զգայունություն վերապրածների խոցելիության նկատմամբ:

### 3.2. Համապատասխանություն միջազգային իրավական չափանիշներին

Երկրորդ առանցքային նպատակը սեռական բռնությանը վերաբերող իրավական կարգավորումների վերլուծությունն է՝ գնահատելու դրանց համապատասխանությունը միջազգային հիմնական փաստաթղթերին: Սեռական բռնության և բռնաբարության իրավական սահմանումները վճռորոշ դեր են խաղում ոչ միայն մեղադրանքի ռազմավարությունների և դատական արդյունքների ձևավորման գործում, այլև հանրային դիսկուրսի և ինստիտուցիոնալ մշակույթի վրա ազդելու առումով: Այն իրավական համակարգերում, որտեղ բռնաբարությունը դեռևս սահմանվում է հիմնականում ֆիզիկական դիմադրության կամ բռնի ուժի կիրառման հիմքով, վերապրածների իրական փորձառությունները՝ ներառյալ սարսափից կամ ճնշումից «սառելու» կամ ենթարկվելու արձագանքները, լիարժեքորեն չեն ճանաչվում (Եվրոպայի Խորհրդի, 2011; ՄԻԵԴ, M.C. ընդդեմ Բուլղարիայի, 2003):

Դիտարկման գործընթացում մանրամասն ուսումնասիրվել է, թե արդյոք Հայաստանի օրենսդրությունը ներառում է համաձայնության վրա հիմնված սեռական բռնության սահմանում՝ համահունչ Ստամբուլի կոնվենցիային (ԵԽՏ, 2011) և Կանանց խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի թիվ 35 Ընդհանուր Խորհրդատվությանը (CEDAW, 2017): Այս միջազգային փաստաթղթերը շեշտադրում են սեռական հարաբերությունների օրինականության համար **ազատ, կամավոր և իրազեկ համաձայնության** անհրաժեշտությունը: Գնահատման առանցքում է այն հարցը, թե ինչպես են հայկական դատարանները կիրառում սեռական բռնության սահմանումները գործնականում՝ հնացած մոտեցումների վրա, ինչպես օրինակ՝ դիմադրության ապացուցման պահանջը, կամ օգտագործո՞ւմ են բռնաբարության միջեր (օրինակ՝ այն կարծիքը, թե վերապրածները ստում են կամ սադրանք են կատարել):

Թեմքինը և Կրասեն (Temkin & Krahe, 2008), ինչպես նաև Թեմքինը, Էշվորթն ու Քոքերը (Temkin, Ashworth & Coker, 2016) ցույց են տալիս, որ բռնաբարության առասպելները շարունակում են գործել նույնիսկ իրավական բարեփոխումներ իրականացրած պետություններում և հաճախ ներկայացվում են որպես վկայության արժանահավատության կամ շարժառիթի վերլուծության բաղադրիչ: Ուստի, դիտարկման նպատակներից մեկն է բացահայտել և քննադատել նման պրակտիկաները՝ խթանելով այնպիսի բարեփոխումներ, որոնք կենսագործում են միջազգային պարտավորությունները և ապահովում են, որ դատական գործընթացները նպաստեն՝ այլ ոչ թե խարխլեն, վերապրածների իրավունքներն ու արժանապատվությունը:

### 3.3. Սեռական բռնություն վերապրած անձանց վրա դատավարական գործընթացի հոգեբանական և ընթացակարգային ազդեցությունների վերլուծություն

Դիտարկման երրորդ նպատակն ուղղված է արդարադատության սուբյեկտիվ չափման ըմբռնմանը՝ հատկապես սեռական բռնության ենթարկված անձանց վրա դատավարական գործընթացի հոգեբանական ազդեցությունների բացահայտմանը, ինչպես նաև՝ արդյոք գործող դատական համակարգը, իր կառուցվածքով և գործնական կիրառմամբ, նպաստում է վերատրավմատիզացիային, թե հակառակը՝ աջակցում վերապրածների վերականգնման գործընթացին: Չնայած որ ֆորմալ դատական գործընթացները հաճախ առաջնահերթություն են տալիս ապացույցների արժանահավատությանը և ընթացակարգերի պահպանմանը, վերապրածների սուբյեկտիվ փորձառությունները հազվադեպ են դիտարկվում որպես արդարադատության անբաժան մաս: Այս բացթողումը կարող է լրջագույն և երկարատև հետևանքներ ունենալ վերապրածների բարեկեցության վրա:

Դատական գործընթացները, որոնք ներառում են վերապրածների բազմակի վկայություն, թշնամական խաչաձև հարցաքննություն կամ անձնական տվյալների հանրային բացահայտում, կարող են զգալիորեն խորացնել հոգեբանական վնասը (Ehrlich, 2003): Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման փորձառությունների արդյունքում բազմաթիվ վերապրածներ հրաժարվում են իրավական պաշտպանության դիմելուց՝ դատավարական միջավայրը ընկալելով որպես թշնամական և վնասաբեր (UN Women, 2015): Բացի այդ, բռնաբարության առասպելների առկայությունը հարցաքննության կամ դատավճռի ընթացքում՝ օրինակ՝ վերապրածի վարքի, հագուստի կամ արձագանքի վերաբերյալ կանխակալ ենթադրությունների ձևով, ամրապնդում է գոհի մեղադրման նարատիվները և կարող է խարխալ արդարության զգացումը (Temkin et al., 2016):

Այս պայմաններում դատավարական գործընթացների դիտարկումը անհրաժեշտ է՝ ի ցույց դնելու այն գործելակերպերը, որոնք վնասում են վերապրածներին, և միաժամանակ՝ խթանելու կառուցվածքային բարեփոխումներ: Դատարանի դահլիճում դատավարության մասնակիցների վարքագծի, վերապրածների նկատմամբ վերաբերմունքի և դատական հիմնավորումների մանրակրկիտ փաստագրումը թույլ է տալիս ձևավորել վերլուծական հիմք՝ ուղղված այնպիսի բարեփոխումների մշակմանը, որոնք առաջնահերթություն են տալիս վերապրածների արժանապատվությանը և հոգեբանական անվտանգությանը: Դրանց շարքում են՝

- դատական և դատախազական մարմինների համար մշակված տրավմայի զգայունության վրա հիմնված վերապատրաստման ծրագրերը,
- դատավարության ընթացքում վերապրածների նկատմամբ չառնչվող կամ խտրական հարցաքննությունների արգելումը,
- և վերապրածների համար հոգեբանական և սոցիալական աջակցության արդյունավետ համակարգերի ներդրումը:

### 3.4. Համակարգային փոփոխությունների խթանում

Մեռական բռնության գործերի դիտարկումը ծառայում է ոչ միայն փաստական վերլուծության, այլև ունի լայն նշանակություն՝ խթանելու այն, թե ինչպես է սեռական բռնությունը հասարակությունում ընկալվում, կանխվում և դատական կարգով կարգավորվում: Իրավական սահմանումներն ու դատական պրակտիկաները միայն սոցիալական վերաբերմունքի արտացոլումը չեն. դրանք միաժամանակ ձևավորում են հասարակական նարատիվներն ու արժեքային համակարգերը: Ինչպես պնդում է Պոպովան (Popova, 2021) և մի շարք այլ իրավագետներ, իրավունքը հանդիսանում է մշակութային իմաստների ու քաղաքականության ձևավորման կարևոր գործոն՝ հատկապես սեռի, իշխանության և սեռականության դաշտում:

Երբ դատական համակարգերը վերապրածներին վերաբերվում են արժանապատվորեն, ամուր պահպանում են համաձայնության վրա հիմնված սեռական ակտերի սահմանումները և հետևողականորեն մերժում են բռնաբարության առասպելները, իրավունքը դառնում է հզոր ազդակ, որ սեռական բռնությունը անընդունելի է և չի կարող անտեսվել կամ նսեմացվել: Այս նպատակն առանձնակի կարևոր է Հայաստանի համատեքստում, որտեղ հայրիշխանական նորմերն ու համակարգային անպատժելիությունը շարունակում են խաթարել սեռական բռնության վերապրածների արդարադատության հասանելիությունը (Human Rights Watch, 2020):

Դիտարկման այս նախաձեռնությունը կարևոր ներդրում է ձևավորող ապացուցողական բազայում, որը կարող է հիմք հանդիսանալ օրենսդրական բարեփոխումների առաջխաղացման, դատական կարողությունների զարգացման, ինչպես նաև հասարակական իրազեկման այնպիսի արշավների իրականացման համար, որոնք ուղղված են բռնության մշակույթի վերացմանը և գենդերային հավասարության խորացմանը:

### Գրականության ցանկ

- Council of Europe: (2011): Եվրոպայի խորհրդի Կոնվենցիա կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին (Ստամբուլի կոնվենցիա):
- Ehrlich, S. (2003): *Representing Rape: Language and Sexual Consent*: Routledge:
- Estrich, S. (1986): Rape: *Yale Law Journal*, 95, էջ 1087–1184:
- Human Rights Watch: (2020): Աշխարհի զեկույց. Հայաստան: Վերցված է <https://www.hrw.org> կայքից:
- Lees, S. (1993): Judicial Rape: *Women's Studies International Forum*, 16(1), էջ 11–36:

Mulla, S. (2014): *The Violence of Care: Rape Victims, Forensic Nurses, and Sexual Assault Intervention*: New York University Press:

Popova, M. (2021): *Sexual Consent*: MIT Press:

Temkin, J., Ashworth, L., & Coker, A. M. (2016): Different Functions of Rape Myth Use in Court: Findings from a Trial Observation Study: *Feminist Criminology*, 13(2), էջ 205–226:

Temkin, J., & Krahé, B. (2008): *Sexual Assault and the Justice Gap: A Question of Attitude*: Hart Publishing:

ՄԱԿ-ի Կանանց խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (CEDAW): (1992): Ընդհանուր Խորհրդատվություն թիվ 19. Կանանց նկատմամբ բռնություն:

ՄԱԿ-ի Կանանց խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (CEDAW): (2017): Ընդհանուր Խորհրդատվություն թիվ 35՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության մասին, թարմացված տարբերակ ԸԽ 19-ի հիման վրա:

ՄԱԿ-Կանայք: (2015): Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ենթարկված անձանց համար կարևոր ծառայությունների փաթեթ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ): (2003): *M.C. ընդդեմ Բուլղարիայի*, Դիմում թիվ 39272/98, 2003 թ. դեկտեմբերի 4-ի դատավճիռ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (OHCHR) և Equality Now: (2020): Փորձագիտական խմբի զեկույց՝ բռնաբարության՝ որպես մարդու իրավունքների լուրջ և համակարգային խախտման և կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ:

# Սեռական բռնության գործերի դատական քննությունը. միջազգային չափանիշներ և դատական լավագույն փորձեր

## Ներածություն

Սեռական բռնության գործերի դատական քննությունը պահանջում է խորը իրազեկվածություն միջազգային իրավական չափանիշների վերաբերյալ և վերապրածակենտրոն ապահովող մոտեցում դատավարական պրակտիկայում: Քաղաքականություն մշակողները, դատավորները, դատախազները և իրավապաշտպանները պարտավոր են ապահովել, որ տեղական օրենսդրությունը և դատավարական ընթացակարգերը համահունչ լինեն համաձայնության սկզբունքի, գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի պետական պարտավորությունների և տուժողի արժանապատվության ու մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի միջև հավասարակշռության նորմերին:

Սույն գլուխը համադրում է սեռական բռնության վերաբերյալ միջազգային իրավական սահմանումները և պետությունների պարտավորությունները՝ ընդգծելով համաձայնության վրա հիմնված իրավական մոտեցումները և տրավմայի վերաբերյալ իրազեկ դատավարական պրակտիկաները: Տեղ է տրվում նաև տարբեր երկրների առաջադեմ փորձի վերլուծությանը, մասնավորապես՝ Շվեդիայի և Մեծ Բրիտանիայի օրենսդրական բարեփոխումներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերին:

Ձևավորելով քաղաքականության մշակման գործիքակազմ՝ այս գլուխը նպատակ ունի ներկայացնել իրավական դաշտի և դատական գործընթացների բարեփոխման համալիր ուղեցույց, որը միաժամանակ երաշխավորում է սեռական բռնության գործերով արդար դատաքննություն, նվազեցնում է վերատրավմատիզացիայի ռիսկը և պաշտպանում է բոլոր կողմերի իրավունքներն ու արժանապատվությունը:

## Գլուխ 4.

## 4.1. Սեռական բռնության՝ համաձայնության վրա հիմնված սահմանումները միջազգային իրավունքում

Սեռական բռնությունը համաձայնության բացակայության հիմքով սահմանելը ներկայումս համընդհանուր ճանաչում վայելող միջազգային չափանիշ է: Եվրոպայի խորհրդի «Ստամբուլի կոնվենցիան» (2011 թ.) հստակ պարտավորեցնում է պետություններին քրեականացնել ցանկացած սեռական գործողություն, որը կատարվել է առանց համաձայնության՝ հեռանալով ֆիզիկական բռնի կամ դիմադրության վրա հիմնված հնացած իրավական մոդելներից: Կոնվենցիայի 36-րդ հոդվածը պահանջում է քրեականացնել «առանց համաձայնության կատարված հեշտոցային, անալ կամ օրալ ներթափանցումը սեռական բնույթ կրող գործողությունների ձևով», ինչպես նաև այլ սեռական բնույթի գործողություններ՝ ներառյալ դեպքեր, երբ անձին ստիպում են մասնակցել նման արարքների:

Կոնվենցիան միաժամանակ հստակեցնում է համաձայնության բնույթը. **համաձայնությունը** պետք է տրվի ազատ կամքով՝ տվյալ իրավիճակի համատեքստում: Այսպես կոչված դրական համաձայնության (affirmative consent) ստանդարտը ենթադրում է, *որ դիմադրության բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես համաձայնություն*. ցանկացած սեռական գործողություն, որն իրականացվել է առանց նախապես և ազատորեն տրված համաձայնության, համարվում է անօրինական:

Այս մոտեցումը նպատակ ունի պաշտպանել սեռական ինքնավարությունը՝ հաշվի առնելով, որ շատ վերապրածներ սարսափի, սառչելու արձագանքի կամ այլ ճնշումների պատճառով կարող են չդիմադրել, սակայն դա չի արդարացնում կատարվածը: Համաձայնության սկզբունքը միջազգային իրավունքի հիմքում դնելով՝ Ստամբուլի կոնվենցիան սահմանում է սեռական բռնության քրեականացման արդի և մարդու իրավունքների համահունչ չափանիշներ:

Եվրոպական դատարանը մարդու իրավունքների հարցերով (ՄԻԵԴ) և սատարել է սեռական բռնության համաձայնության վրա հիմնված այս արդի մոտեցումը: «Մ.Կ. ընդդեմ Բուլղարիայի» նշանակալի գործում (2003 թ.) Դատարանը եկել է եզրակացության, որ Բուլղարիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) դրույթները՝ բռնաբարության գործով ֆիզիկական դիմադրության ապացույց պահանջելով: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ սեռական բռնության մասին օրենքները պետք է արդյունավետորեն քրեականացնեն և պատժեն ցանկացած սեռական գործողություն, որն իրականացվել է առանց համաձայնության՝ նույնիսկ ֆիզիկական ուժի կիրառման բացակայության դեպքում:

Դատարանը հատկապես ընդգծել է, որ ՄԻԵԿ-ի 3-րդ (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) և 8-րդ (անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանություն) հոդվածների ներքո պետությունները պարտավոր են «ստեղծել և արդյունավետորեն կիրառել քրեական իրավական համակարգ, որը պատժում է բռնաբարության և սեռական բռնության բոլոր

ձևերը», ներառյալ այն դեպքերը, երբ **չկա դիմադրության հստակ ապացույց**:

Այս վճիռը հստակ ամրապնդում է այն սկզբունքը, որ սեռական բռնության համատեքստում մարդու իրավունքների իրավունքում առանց համաձայնության սեռական ակտը՝ անկախ ֆիզիկական բռնության կամ դիմադրության առկայությունից, պետք է համարվի բռնություն: **Համաձայնության բացակայությունն է՝ ոչ թե դիմադրության կամ բռնի ուժի առկայությունը, որ կազմում է սեռական բռնության էությունը:**

Այս միջազգային նորմերը ձևավորում են ազգային օրենսդրությունների լավագույն փորձը. բազմաթիվ երկրներ վերանայել են իրենց սահմանումները սեռական բռնության մասին՝ դրանք կառուցելով համաձայնության բացակայության հիմքով: Օրինակ՝ **Շվեդիան 2018 թ.** ընդունեց նոր օրենք, որով բռնաբարություն է համարվում ցանկացած սեռական ակտ, եթե չկա հստակ տրված համաձայնություն՝ առանց հարկադրանքի կամ սպառնալիքի առկայության պահանջի: Այս բարեփոխումը հանգեցրեց դատապարտումների թվի աճի և արժանացավ դրական գնահատականի՝ որպես «այդ՝ նշանակում է այդ» մոտեցման օրինականացում, ըստ որի միայն ազատ կամքով տրված համաձայնությունն է դարձնում սեռական հարաբերությունը օրինական:

Համաձայնության վրա հիմնված սահմանումները լիովին համապատասխանում են **Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածին** և նպաստում են նրան, որ գոհերը չգրկվեն արդարադատությունից՝ հնացած պատկերացումների պատճառով, իբր բռնաբարության համար պարտադիր է ֆիզիկական դիմադրության կամ բռնի պայքարի առկայությունը: Բացի այդ, դատարաններն այս մոդելի կիրառման դեպքում պարտավոր են գնահատել կոնկրետ դեպքի բոլոր հանգամանքները՝ որոշելու համար՝ եղել է արդյոք ազատ կամքով տրված համաձայնություն, այլ ոչ թե կենտրոնանալ միայն տուժողի դիմադրության արտաքին նշանների վրա:

Ժամանակակից իրավական պրակտիկան հատկապես կարևորում է բռնաբարության վերաբերյալ առասպելների և սեքսիստական կողմնակալությունների բացառումը համաձայնության գնահատման գործընթացում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2025 թ. «Լ. և մյուսները Ֆրանսիայի դեմ» գործով քննադատեց ազգային իշխանություններին այն բանի համար, որ վերջիններս տուժողի վկայության արժանահավատությունը հարցականի տակ էին առել՝ հիմնվելով նրա «չգոռալու» կամ «չդիմադրելու» փաստի վրա: Դատարանը այդ վերաբերմունքը որակեց որպես **«համապատասխանող բռնաբարության ժամանակակից սահմանմանը, որը այլևս չի հիմնվում գոհի կողմից ֆիզիկական դիմադրության ապացույցի վրա»:**

Դատարաններն այժմ պարտավոր են ճանաչել, որ սեռական բռնության գոհերը հաճախ կարող են «սառչել» կամ ենթարկվել վախի պատճառով, և նման արձագանքները որևէ կերպ չեն համարվում ազատ կամքով տրված համաձայնություն: Արդյունքում՝ միջազգային իրավական նորմերի համաձայն, սեռական բռնության հիմնական բնութագիրը **կամավոր և ազատ կամքով տրված համաձայնության բացակայությունն է**, և այդ սկզբունքը պետք է արտացոլված լինի ինչպես օրենսդրական կարգավորումներում, այնպես էլ դատական պրակտիկայում:

## 4.2. Պետությունների պարտավորությունները սեռական բռնության վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավունքի ներքո

Պետությունները ոչ միայն խրախուսվում են պատշաճ ձևով սահմանել սեռական բնույթի հանցագործությունները, այլ նաև պարտավոր են՝ միջազգային մարդու իրավունքների իրավունքի շրջանակում, իրականացնել կանխարգելիչ և արդյունավետ արձագանքման միջոցառումներ՝ առանց խտրականության: Մի շարք հիմնարար միջազգային պայմանագրեր և իրավական մարմիններ հստակ ձևակերպում են այս դրական պարտավորությունները:

### Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ-ի 3-րդ և 8-րդ հոդվածները պարտավորեցնում են պետություններին **արգելել, արդյունավետորեն հետաքննել և պատժել բռնաբարության և սեռական բռնության բոլոր ձևերը**: 3-րդ հոդվածը (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելք) մեկնաբանվում է որպես պարտավորություն՝ պաշտպանելու անձանց վատ վերաբերմունքից, այդ թվում՝ ոչ պետական գործող անձանց կողմից: 8-րդ հոդվածը (անձնական կյանքի հարգանքի իրավունք) պահանջում է, որ պետությունները ապահովեն «արդյունավետ քրեա-իրավական դրույթներ», որոնք կարող են կանխել սեռական բռնության նման ծանր արարքները, քանի որ սեռական ինքնավարությունը դիտարկվում է որպես անձնական կյանքի հիմնարար բաղադրիչ:

Այս հոդվածների համակցված ընթերցմամբ՝ Եվրոպական դատարանը հստակեցրել է, որ **«պետությունները դրական պարտավորություն ունեն ... ընդունել և կիրառել քրեաիրավական դրույթներ, որոնք արդյունավետ կերպով պատժում են բռնաբարությունը, և դրանք կիրառել գործնականում՝ արդյունավետ հետաքննությունների և քրեական դատավարության միջոցով»**: Այս սկզբունքը ամրագրվել է *M.C. ընդդեմ Բուլղարիայի* վճռում, որով դատարանը եզրակացրել է, որ իշխանությունների կողմից գործի չհետաքննելը կամ դատախազական անգործությունը, հատկապես ֆիզիկական բռնի ուժի բացակայության պարագայում, կարող է համարվել Կոնվենցիայի խախտում: Այդ գործով հետաքննող մարմինների դժկամությունը՝ քրեական գործ հարուցել առանց բռնի ուժի կիրառման ապացույցների, ճանաչվել է որպես պետության պոզիտիվ պարտավորությունների խախտում՝ «բռնաբարության և սեռական բռնության բոլոր ձևերն արդյունավետորեն պատժելու» միջազգային ժամանակակից չափանիշների լույսի ներքո:

Այս պոզիտիվ պարտավորությունները պետք է իրականացվեն **առանց խտրականության**, հատկապես՝ սեռի/գենդերի հիմքով: Եվրոպական դատարանը գնալով ավելի խիստ է գնահատում սեռական բռնության գործերով պետական այն արձագանքները, որոնք կասկածի տակ են դնում տուժողի իրավունքների պաշտպանությունը սեռական խտրականության կամ գենդերային կարծրատիպերի ազդեցության պատճառով՝ դիտարկելով դրանք որպես ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածի (այլ հոդվածների հետ համակցված) խախտում:

*X. ընդդեմ Կիպրոսի (2025)* գործում, որը վերաբերում էր խմբային բռնաբարության անարդյունավետ քննությանը, դատարանը եզրակացրեց, որ **«կանանց նկատմամբ առկա կողմնակալ ընկալումները խաթարել էին հայցվորի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը»** և կարող էին խթանել անպատժելիության մթնոլորտի ձևավորում: Իշխանությունները վաղաժամ դադարեցրել էին գործի քննությունը, հնարավոր է՝ տուժողի սեռական վարքագծի վերաբերյալ կողմնակալ պատկերացումների պատճառով: Դատարանը հատուկ ընդգծեց, որ տուժողի անցյալի սեռական վարքագծի կամ ենթադրյալ բնավորության վրա կենտրոնանալը անթույլատրելի է և չի կարող արդարացնել արդարադատություն չիրականացնելը:

Նմանատիպ դիրքորոշում ունի նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), որն արդեն երկար տարիներ սեռով պայմանավորված բռնությունը դիտարկում է որպես խտրականության ձև: Կոնվենցիայի թիվ 19 Ընդհանուր հանձնարարականը (1992 թ.) հստակ նշում է, որ բռնությունը կանանց նկատմամբ, ներառյալ՝ բռնաբարությունը, «լուրջ խոչընդոտ է հանդիսանում կանանց՝ տղամարդկանց հետ հավասար հիմունքներով իրավունքներից և ազատություններից օգտվելու համար», և որ պետությունները կարող են կրել պատասխանատվություն մասնավոր անձանց կողմից կատարված բռնության համար, եթե բավարար ջանք չեն գործադրել խախտումները կանխելու ուղղությամբ: Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը (2017 թ.) լրացնում է սա՝ հաստատելով, որ գենդերային բռնության վերացումը հանդիսանում է միջազգային սովորության իրավունքի սկզբունք և վերահաստատելով, որ սեռական բռնության գործերով իշխանությունների անգործությունը կամ հանդուրժողականությունը կարող է **հավասարեցվել պետության հիմնարար պարտավորությունների խախտման:**

Այս պահանջների համաձայն՝ պետությունները պարտավոր են երաշխավորել, որ սեռական բռնության վերաբերյալ բողոքների քննությունը կատարվում է արդար, անկողմնակալ և արդյունավետ ձևով՝ անկախ տուժողի սեռից կամ ծագումից: Իրավապահ և դատական մարմինների գործողություններում ցանկացած խտրական վերաբերմունք կամ կարծրատիպային մոտեցում կարող է դիտարկվել որպես միջազգային իրավունքի խախտում:

## **ԱՄԿ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան**

Բռնաբարությունն ու սեռական բռնության ծանր դրսևորումները մի շարք համատեքստերում ճանաչվում են որպես խոշտանգում կամ դաժան վերաբերմունքի ձևեր, ինչն ակտիվացնում է պետությունների պարտավորությունները Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի (CAT) շրջանակում: Խոշտանգումների դեմ կոմիտեն բազմիցս ընդգծել է, որ սեռական բռնությունը կարող է պատճառել ուժեղ ֆիզիկական և հոգեբանական ցավ կամ տառապանք՝ խտրականության դրդապատճառով (օրինակ՝ գենդերային հիմքով բռնություն), և այդպիսով կարող է համարվել խոշտանգում:

Պետությունները պարտավոր են ցուցաբերել պատշաճ միջոցառումներ՝ սեռական բռնության գործողությունները կանխելու, արդյունավետորեն քննություն իրականացնելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ նույնիսկ երբ դրանք կատարվել են ոչ պետական սուբյեկտների կողմից: Հակառակ դեպքում պետության անգործությունը կարող է հավասարվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի լռելյայն ընդունման: Օրինակ՝ եթե իրավապահ մարմինները պարբերաբար ձախողում են կանանց պաշտպանությունը բռնաբարություններից կամ չեն իրականացնում պատշաճ քրեական հետապնդում, դա կարող է դիտվել որպես անհամաչափ վերաբերմունք և խոշտանգման ձև՝ միջազգային իրավունքի իմաստով:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավոր են ձեռնարկել արդյունավետ օրենսդրական, վարչական և դատական միջոցառումներ՝ խոշտանգումները կանխելու համար «իրենց իրավագործության տակ գտնվող ցանկացած տարածքում»: Այս պարտավորությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ սեռական բռնությունը կատարվել է ոչ պետական սուբյեկտների կողմից: Ընդհանուր առմամբ, միջազգային իրավունքը սեռական բռնության համաճարակն ընկալում է ոչ թե որպես բացառապես «մասնավոր» հանցագործություն, այլ որպես մարդու իրավունքների խախտում, որը պահանջում է պետության ակտիվ և ամբողջական արձագանք:

Սա ներառում է հստակ և ուժեղ օրենսդրության ընդունում, իրավապահների և դատական համակարգում աշխատողների մասնագիտական վերապատրաստում, բողոքների արագ և անաչառ քննություն, մեղավորների քրեական պատասխանատվություն և վերապրածներին փոխհատուցման տրամադրում: Այս գործողությունների ձախողումը կարող է բերել պետության կողմից ստանձնած պարտավորությունների խախտման:

## **Արդարադատության մատչելիության ապահովման պարտականություն**

Մարդու իրավունքների պաշտպանության շրջանակում պետությունների դրական պարտավորություններից մեկն է՝ վերացնել այն խոչընդոտները, որոնց զոհերը հաճախ բախվում են արդարադատության գործընթացում:

Միջազգային իրավական մարմինները բազմիցս հորդորել են վերացնել այն իրավական պահանջները, որոնք անաչառ կերպով ծանրաբեռնում են սեռական բռնության զոհերին: Մասնավորապես, Կանանց խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) կոմիտեն կոչ է արել չեղարկել այն դրույթները, որոնց համաձայն տուժողի ցուցմունքները պետք է հաստատվեն լրացուցիչ ապացույցներով կամ վկաներով: Այս պահանջը բխում է խտրական ու անհիմն ենթադրությունից, թե կանայք և աղջիկները «բնականից» արժանահավատ չեն:

Նույն կերպ, բոլոր այն սահմանափակումները, որոնք անհամաչափորեն խոչընդոտում են բռնաբարության գործերով քրեական հետապնդումը (օրինակ՝ վաղեմության ժամկետները կամ բարդ դատավարական ընթացակարգերը), անհրաժեշտ է վերանայել: Հաշվի առնելով, որ վերապրածները հաճախ ուշ են հանցագործության մասին հայտարարում՝ սթրեսի, վախի կամ սոցիալական խարանի պատճառով, ինչը կարող է հանգեցնել արդարադատությունից հրաժարման:

Ստամբուլի կոնվենցիան հատուկ սահմանում է, որ սեռական բռնության վերաբերյալ քննություններն ու հետապնդումները չպետք է ամբողջությամբ կախված լինեն տուժողի կողմից ներկայացված հաղորդումից կամ բողոքից, և կարող են շարունակվել, նույնիսկ եթե տուժողը հետ կանչի իր բողոքը: Այս դրույթի նպատակն է երաշխավորել, որ արդարադատության որոնման ողջ բեռը չդրվի տրավմա կրած վերապրածների ուսերին, և որ պետությունն ի վիճակի լինի հետապնդել մեղավորներին ինքնագործարկման սկզբունքով (*ex officio*)՝ անկախ տուժողի ներգրավվածության աստիճանից:

### 4.3. Տրավմայի մասին տեղեկացված և գոհակենտրոն դատական պրակտիկաներ

Նույնիսկ այն դեպքում, երբ սեռական բռնության վերաբերյալ առկա են ուժեղ օրենսդրական դրույթներ և արդյունավետ մեխանիզմներ, հենց դատարանների փորձառությունը կարող է կամ խորացնել վերապրածի տրավման, կամ նպաստել նրա վերականգնմանը: Միջազգային լավագույն փորձը հորդորում է կիրառել տրավմայի մասին տեղեկացված և վերապրածակենտրոն մոտեցումներ դատավարության ընթացքում, որոնց նպատակը դատական վարույթի ժամանակ առաջացող երկրորդային վնասի կանխումն է՝ այդ թվում վերապրածի հանդեպ անհաղթահարելի, ոչ գուսպ կամ թշնամական վերաբերմունքի արդյունքում ստեղծված նոր տրավման: Ստամբուլի կոնվենցիայի 56-րդ հոդվածը պարտադրում է պաշտպանական միջոցների կիրառում՝ «քննության և դատավարության բոլոր փուլերում»՝ պահանջելով երաշխավորել տուժածի իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը, ինչպես նաև՝ որպես վկա նրա կարիքների նկատմամբ հարգալից վերաբերմունքը:

#### Վերապրածակենտրոն դատական պրակտիկայի առանցքային տարրերն են՝

**Երկրորդային տրավմատիզացիայի կանխարգելում.** Դատարանները պետք է հարմարեցնեն իրենց ընթացակարգերը՝ նվազեցնելու համար սեռական բռնություն վերապրած անձանց մոտ վկայություն տալու ընթացքում առաջացող սթրեսն ու վախը: Սա կարող է ներառել թե՛ պարզ փոփոխություններ, օրինակ՝ վկայության ընթացքում պարբերական ընդմիջումների թույլտվություն, և թե՛ կառուցվածքային լուծումներ՝ ուղղված տուժողին մեղադրյալի հետ ուղղակի առերեսումից զերծ պահելուն: Շատ երկրներում կիրառվում են հատուկ մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ էկրաններ կամ տեսակապի միջոցով հարցաքննություն, որպեսզի տուժածը ստիպված չլինի անմիջապես նայել մեղադրյալին՝ հիշեցնելով խորը անձնական և ցավոտ միջադեպերը: Մասնավորապես, Անգլիայում և Ուելսում սեռական բնույթի հանցագործությունների գործերով տուժածները օրենքով համարվում են «վտանգի տակ գտնվող վկաներ»՝ ստանալով հատուկ պաշտպանության իրավունք: Նրանք կարող են վկայել էկրանների հետևում, տեսակապի միջոցով կամ նույնիսկ դատական փակ նիստի ընթացքում՝ խուսափելով ուղիղ առերեսումից: Այս միջոցները ցուցաբերել են բարձր արդյունավետություն՝ թույլ տալով տուժածներին լիարժեք կերպով ներկայացնել իրենց վկայությունը՝ միևնույն ժամանակ չվնասելով մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը, քանի որ դատավորը և պաշտպանությունը շարունակում են լսել և տեսնել տուժողին, իսկ խաչաձև հարցաքննությունը տեղի է ունենում սովորական ձևով՝ համապատասխան պաշտպանական սահմանափակումներով: Միացյալ Թագավորության մոտեցումը արտացոլում է ավելի լայն միջազգային միտում՝ ըստ որի հոգեբանական անվտանգությունը արդարադատության էական բաղադրիչն է: Եթե տուժածը չափազանց տրավմատիզացված է լիարժեք մասնակցելու համար կամ իր վկայության ընթացքում կրկին զգում է ոտնահարում, ապա դատական գործընթացը չի կարող համարվել արդար:

**Անձնական տվյալների և արժանապատվության պաշտպանություն.** Դատարանները պարտավոր են հնարավորինս ապահովել սեռական բռնություն վերապրած անձանց գաղտնիության պաշտպանությունը: Սա կարող է ներառել անձնական տվյալների հրապարակման արգելանքներ՝ երբ տուժողի անունը չի ներկայացվում դատական արձանագրություններում, փակ նիստեր՝ հատկապես զգայուն վկայությունների համար, կամ մամուլի նկատմամբ կիրառվող սահմանափակումներ՝ ուղղված գոհի ինքնության տարածումը կանխելուն: Ստամբուլի կոնվենցիայի 56-րդ հոդվածը հստակ ամրագրում է տուժողների անվտանգության և անձնական կյանքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ ընդգծելով հատկապես ինքնության և պատկերի գաղտնիության ապահովումը, ինչպես նաև՝ նույնականացնող տեղեկությունների չհրապարակման կարևորությունը անհրաժեշտության դեպքում: Դատական համակարգի բոլոր աշխատակիցները պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում՝ օգտագործելու հարգալից լեզու և խուսափելու մեղադրող կամ նվաստացնող տոնից: Մի շարք երկրներում թույլատրվում է, որ դատարանի հատուկ աջակցող անձինք կամ տուժողների շահերի պաշտպանները ուղեկցեն տուժողին դատարանում կամ վկայության ժամանակ՝ ապահովելով էմոցիոնալ աջակցություն: Այս բոլոր միջոցառումները ճանաչում են սեռական բռնության հետևանքով առաջացած տրավման և ուղղված են կանխելու այն, ինչ Ստամբուլի կոնվենցիայում և ՄԻԵԴ-ի նախադեպերում նկարագրվում է որպես «երկրորդային զոհականացում»՝ երբ զոհը դառնում է արդարադատական համակարգի վերաբերմունքի հետևանքով նորից վնաս կրող կողմ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ իշխանությունները պետք է խուսափեն «սեռային կարծրատիպերի վերարտադրությունից»: Սա նշանակում է, որ դատավորները **պետք է անհապաղ միջամտեն**, եթե տուժողին ուղղվում են նվաստացնող հարցեր կամ երբ դատավարության ընթացքում ներմուծվում են նրա անձի վերաբերյալ ոչ առնչվող բարոյական դատողություններ՝ օրինակ՝ հագուկապի կամ սոցիալական վարքի վերաբերյալ:

**Զգայուն ժամանակացույց և դատավարության միջավայրի կազմակերպում.** Վերապրածակենտրոն մոտեցումն ընդգրկում է նաև դատավարության ժամանակացույցի և միջավայրի զգայուն կազմակերպումը: Դատարանները կարող են կազմակերպել տուժողի ցուցմունքները՝ օրինակ՝ այն նշանակելով օրվա սկզբին, որպեսզի նվազեցնեն ողջ օրը դատարանում սպասելու պատճառով առաջացող սթրեսն ու անհանգստությունը: Պետք է ապահովվեն առանձին սպասարահներ տուժողների և ամբաստանյալների համար՝ կանխելու համար պատահական հանդիպումները, որոնք կարող են վախեցնել կամ ճնշել զոհին: Որոշ երկրներում կիրառվում են հեռակա վկայության հնարավորություններ՝ առանձին սենյակներ, որոնք տեսազանգով միացված են դատարանին, որպեսզի տուժողը երբեք ֆիզիկապես չհայտնվի նույն տարածքում ամբաստանյալի հետ: Այն դեպքերում, երբ դեմ առ դեմ հանդիպումը խուսափելի չէ, դատարանի աշխատակիցները կամ անվտանգության

պատասխանատուները պետք է ապահովեն, որ տուժողը չմտնի կամ դուրս չգա դատարանի դահլիճից ամբաստանյալի կամ վերջինիս կողմնակիցների հետ միասին: Այս թվացյալ փոքր դատավարական կազմակերպչական փոփոխությունները կարող են զգալիորեն մեղմել տուժողի տրավման:

### **Տրավմայի վերաբերյալ վերապատրաստում.**

Իրապես տրավմայից իրագել դատարան հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրա բոլոր մասնակիցները՝ դատավորները, դատախազները, պաշտպանները և դատարանի աշխատակազմը, պատշաճ կերպով տեղեկացված լինեն սեռական բռնության հոգեբանական ազդեցությունների վերաբերյալ: Դատական համակարգի վերապատրաստումները պետք է ներառեն տրավմայի նյարդաբանական և վարքաբանական հետևանքները՝ օրինակ՝ այն, որ վերապրածների հիշողությունները կարող են լինել մասնատված, հուզական արձագանքները՝ ուշացած կամ ոչ արտահայտված: «Անշարժություն» (freeze response) կոչվող երևույթի ճանաչումը կարող է կանխել այնպիսի սխալ մեկնաբանություններ, թե իբր տուժողի հանգիստ վարքագիծը կամ զգացմունքների բացակայությունը դատարանում նշանակում է, որ միջադեպը լուրջ չի եղել կամ որ նա անհավաստի է:

Ըստ Ստամբուլի կոնվենցիայի 15-րդ հոդվածի՝ մասնագետները պետք է վերապատրաստվեն՝ իմանալու տուժածների կարիքները և իրավունքները, ինչպես նաև՝ երկրորդային զոհայնացման կանխարգելման մեթոդները: Տրավմայի մասին տեղեկացված դատավորը, օրինակ, կարող է թույլ տալ սեռական բռնություն վերապրած անձին դատարանում ունենալ ծանոթ հանգստացնող առարկա կամ ուղեկցող աջակցի ներկայություն, եթե դա օգնում է մեղմել տագնապը: Նա կհասկանա, որ նման պայմանները չեն նվազեցնում դատարանի ձևականությունը, այլ հակառակը՝ նպաստում են, որ վկայությունը լինի առավել ազատ և ճշգրիտ:

### **Կարծրատիպերի և կողմնակալության դեմ պայքար.**

Վերապրածակենտրոն մոտեցման կարևորագույն տարրերից է սեռական բռնության դատավարությունների ընթացքում պատմականորեն արմատացած գենդերային կարծրատիպերի գիտակցված չեզոքացումը: Դատարանները պետք է երաշխավորեն, որ հնացած պատկերացումները՝ օրինակ՝ կնոջ «պատվի», «համեստության» կամ նախկին սեռական վարքի վերաբերյալ հարցադրումները, որևէ տեղ չունեն դատական նիստում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերջին տարիներին խստորեն քննադատել է այն իրավասու մարմիններին, որոնք դատարանում օգտագործել են «բարոյախրատական և մեղադրող լեզու»՝ նկատողություններ անելով տուժածին «պատշաճ» դիմադրություն չցուցաբերելու համար կամ նրա հագուկապն ու սոցիալական վարքագիծը դիտարկելով որպես մեղմացուցիչ հանգամանք: Դատարանը նման դիրքորոշումները համարել է մարդու իրավունքների խախտում և սեռական կողմնակալություն արտացոլում:

Վերապրածակներին տրոն դատավարական մոտեցումը, ընդհակառակը, հիմնվում է կարեկցանքի և հարգանքի վրա՝ կենտրոնանալով բացառապես իրավունքի շրջանակներում էական փաստերի վրա՝ մասնավորապես՝ արդյոք տրվել է համաձայնություն և ինչպես: Դատարանները պետք է իրենց գործողություններով, կայացրած որոշումներով և խոսքերով հստակ ցույց տան, որ հենց մեղադրյալն է կանգնած դատարանի առաջ, այլ ոչ թե տուժողը:

Համեմատական փորձը լավ օրինակ է ծառայում վերոնշյալ սկզբունքներն ուսումնասիրել կիրառության մեջ: Միացյալ Թագավորությունում, բացի հատուկ պաշտպանիչ միջոցների կիրառությունից, գործում են Սեռական բռնության անկախ խորհրդատուներ (Independent Sexual Violence Advisors – ISVAs), ովքեր աջակցում են տուժածներին ամբողջ դատական գործընթացի ընթացքում: Բացի այդ, դատարանները հաճախ կազմակերպում են նախնական նիստեր՝ կոչված «գրառնդ ռուլս» (ground rules hearings), որոնց նպատակն է նախապես պայմանավորվել, թե ինչպես են հարցաքննվելու խոցելի վկաները՝ ապահովելով հնարավորինս ոչ վնասարար մոտեցում: Կանադայում ներդրվել են դատավարական հատուկ կարգադրագրեր, և որոշ դեպքերում նույնիսկ թույլատրվում է, որ խոցելի վկաների վկայության ընթացքում նրանց կողքին լինի հարմարավետություն ապահովող շուն:

Այս օրինակները վկայում են ավելի լայնածավալ միտումի մասին. տարբեր երկրներում արդարադատության համակարգերն աստիճանաբար վերանախագծում են դատավարական գործընթացները՝ դարձնելով դրանք ավելի մարդակենտրոն և հզորացնող սեռական բռնության գոհերի համար: Սա հակասություն չունի արդար դատաքննության սկզբունքի հետ. ընդհակառակը, այն նպաստում է դատավարության ամբողջականությանը՝ ապահովելով ճշգրիտ և ամբողջական վկայություն:

#### **4.4. Դատական բռնության ընթացքում ապացույցների գնահատման չափանիշները**

Սեռական բռնության գործերով արդար և տրավմայի հանդեպ զգայուն դատավարություն ապահովելու համար պետությունները պետք է վերանայեն ավանդական ապացույցային չափանիշները: Միջազգային և տարածաշրջանային իրավունքի աղբյուրները՝ Ստամբուլյան կոնվենցիան, ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները, ինչպես նաև միջազգային քրեական դատարանների փորձը, առաջարկում են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված արդար դատաքննությանը և տուժողի իրավունքների պաշտպանությանը:

##### **1. Ցուցմունքի հաստատման համար այլ ապացույցների պահանջի վերացում (Չպահանջվող հաստատում)**

Տարիներ շարունակ տուժող կանանցից պահանջվել է ներկայացնել ֆիզիկական վնասվածքների կամ վկաների ապացույցներ՝ հաստատելու համար բռնաբարության փաստը: Այս մոտեցումը հակա-

սում է իրականությանը, քանի որ սեռական բռնությունը հիմնականում կատարվում է առանց վկաների՝ փակ միջավայրերում, և ֆիզիկական դիմադրությունը միշտ չէ, որ հնարավոր է տրավմայի պատճառով:

Ստամբուլյան կոնվենցիան և CEDAW-ը հստակ հայտարարում են, որ նման պահանջները խտրական են և խաթարում են արդար դատաքննության իրավունքը:

Համապատասխանաբար, Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանը (ICTY) վաղուց ընդունել է 96-րդ կանոնը, որում նշվում է, որ սեռական բռնության գործերով «տուժողի ցուցմունքի հաստատում չի պահանջվում»: Ժամանակակից դատարանները, փոխարենը, կենտրոնանում են ցուցմունքի բնորոշ հավաստիության և հետևողականության, վկայի վարքագծի և առկա ցանկացած հիմնավորող ապացույցի վրա (օրինակ՝ անհապաղ բողոք, դատաբժշկական ապացույցներ և այլն), առանց սեռական հանցագործությունների գոհերի վրա դնելու հատուկ ապացուցողական բեռ, որը չի կիրառվում այլ հանցագործությունների գոհերի նկատմամբ:

Միջազգային քրեական դատարաններն ընդունել են, որ **տուժողի հետևողական և տրամաբանական ցուցմունքը կարող է բավարար լինել մեղադրանքի հաստատման համար**, առանց լրացուցիչ ապացույցների պահանջի: Սա կարևոր քայլ է դեպի այն ճանաչումը, որ սեռական բռնությունը պետք է դիտվի որպես բոլոր մյուս հանցագործությունների նման՝ առանց հատուկ ապացույցային բեռի:

## 2. Տուժողի սեռական կյանքի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու արգելք (Rape Shield Rules)

Սեռական բռնության գործերով արդար դատաքննության և տուժողի արժանապատվության պաշտպանության կարևոր գրավականը սեռական անցյալի ապացույցների օգտագործման արգելքն ու սահմանափակումն է: Այսպես կոչված «Rape Shield» կանոնները կանխում կամ խիստ սահմանափակում են դատավարության ընթացքում տուժողի նախկին կամ հետագա սեռական վարքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը:

Նման ապացույցները սովորաբար ոչ էական են և հաճախ օգտագործվում են ենթադրելու համար, թե տուժողը պակաս արժանահավատ է կամ հավանաբար համաձայնել է սեռական հարաբերության՝ միայն իր սեռական պատմության հիման վրա: Այս ենթադրությունը հիմնված է գենդերային կարծրատիպերի և խտրականության վրա:

Օրինակ՝ բռնաբարության մասին ուշացած հաղորդումը հայտնի երևույթ է (հաճախ՝ տրավմայի, ամոթի կամ չհավատալու վախի պատճառով), սակայն որոշ երկրների պրակտիկայում ուշացումը չեն դիտարկում որպես ապացույց, իսկ մեղադրանքը կեղծ համարում: Նմանապես, տուժողի կողմից հանցագործի հետ կապ պահպանելը կամ դրանից հետո տեսանելիորեն վշտացած չթվալը կարող է հակասական թվալ, բայց տրավմայի մասնագետները դրանք ճանաչում են որպես հնարավոր հաղթահարման մեխանիզմներ կամ շոկի հետևանքներ:

Արդար գնահատումը ամրապնդելու համար քննիչներին պետք է տեղեկացված լինեն «բռնաբարության մասին միջերի մասին»: (օրինակ՝ «իրական» գոհերը միշտ հակադարձում են, գոռում կամ անմիջապես դիմում են ոստիկանություն՝ առասպելներ, որոնք հերքվել են): Դրա փոխարեն, դատարաններին խրախուսվում է հաշվի առնել գոհի համաձայնություն տալու անկարողության (օրինակ՝ հարբածություն կամ անգիտակից վիճակ, ուժերի անհավասարակշռություն կամ բացահայտ հրաժարումներ) վերաբերյալ ցանկացած ապացույց:

**Ստամբուլյան կոնվենցիայի 54-րդ հոդվածը հստակ պահանջում է**, որ նման ապացույցները թույլատրվեն միայն այն դեպքում, երբ դրանք միաժամանակ **համապատասխան և անհրաժեշտ են գործի հանգամանքների բացահայտման համար**: Սա սահմանում է բարձր շեմ՝ բացառելով տուժողի անձնական կյանքի վերաբերյալ «ոբսի» փորձերը: Այդպիսի տեղեկատվությունը սովորաբար **ոչ մի կապ չունի համաձայնության հարցի հետ և միայն շեղում է դատաքննության էությունը՝ տուժողին դնելով ամբաստանյալի դիրքում**:

Այս կանոնները օգնում են խուսափել սխալ ենթադրություններից, օրինակ՝ որ եթե կինը նախկինում ունեցել է սեռական հարաբերություններ, ապա հավանաբար համաձայնել է նաև տվյալ դեպքում, կամ որ նա պակաս արժանի է պաշտպանության: Նման համոզմունքները չունեն ո՛չ իրավական, ո՛չ գիտական հիմք:

## **4.5. Տուժողների և մեղադրյալների հարցաքննություն. արժանապատվության և արդար դատաքննության ապահովում**

Սեռական բռնության գործերով դատավարության ընթացքում տուժողների և մեղադրյալների հարցաքննման ձևը պահանջում է հավասարակշռություն. անհրաժեշտ է ապահովել, որ տուժողները պաշտպանված լինեն հալածանքից և նվաստացումից, իսկ մեղադրյալները պահպանեն իրենց իրավունքները՝ վիճարկելու ապացույցները և ներկայացնելու պաշտպանություն: Միջազգային լավագույն փորձը և մարդու իրավունքների նախադեպային իրավունքը սահմանում են հստակ ուղեցույցներ՝ սեռական բռնության գործերով դատարանում հարցաքննության կարգավորումն ապահովելու համար՝ միաժամանակ հարգելով տուժողների/վկաների արժանապատվությունը և մեղադրյալների արդար դատաքննության իրավունքը:

### **1) Տուժողներ/Վկաներ**

Իսպաձև հարցաքննությունը արդար դատաքննության հիմնասյուներից է, սակայն սեռական բռնության հանցագործությունների գործերով այն պետք է իրականացվի առանձնահատուկ զգայունությամբ: Ոչ պատշաճ հարցերը կարող են վերածվել երկրորդային վիկտիմիզացիայի և նույնիսկ տուժողներին հետ պահել հաղորդում ներկայացնելուց: Այդ իսկ պատճառով դատարաններն ունեն իրավասություն և պար-

տավորություն վերահսկելու հարցաքննության ծավալն ու ոճը՝ բռնության կանխարգելման նպատակով: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը ընդգծել է այս սկզբունքը *Y ընդդեմ Մյովենիայի* գործով (2015), որտեղ բռնաբարության ենթարկված տուժողը ենթարկվել էր վիրավորական հարցաքննության մեղադրյալի կողմից, ով իրեն ներկայացնում էր առանց փաստաբանի: ՄԻԵԴ-ն արձանագրեց Կոնվենցիայի խախտում՝ նշելով, որ դատավորն իր պարտականությունները չի կատարել՝ թույլ տալով ամբաստանյալին հանդես գալ սեքսիստական և նվաստացնող հայտարարություններով: Դատարանը շեշտեց, որ «պաշտպանության կողմին պետք է հնարավորություն տրվի վիճարկել վկայի արժանահավատությունը, սակայն խաչաձև հարցաքննությունը չպետք է վերածվի վկաներին վախեցնելու կամ նվաստացնելու միջոցի»: Մասնավորապես ընդգծվեց, որ ամբաստանյալի պնդումները՝ իբր տուժողը «սուտ է խոսում» կամ «լաց է լինում պատվերով», դուրս էին թույլատրելիության սահմաններից: **Դատավորը պարտավոր էր միջամտել** և արգելել նվաստացնող հարցերը՝ ապահովելով վկայի արժանապատվության պահպանումը: Այս մոտեցումն այժմ լայնորեն ընդունված է. դատավորները կարող են և պետք է բավարարեն առարկությունները կամ սեփական նախաձեռնությամբ արգելեն այն հարցերը, որոնք միտված են միայն վկային ամոթանք տալուն կամ նվաստացնելուն (օրինակ՝ տուժողի սեռական վարքագծի հետ կապ չունեցող դետալների վերաբերյալ հարցեր, նվաստացնող լեզու կամ անբարո վարքագծի կրկնվող մեղադրանքներ):

## 2) Գաշտպանյալներ

Մյուս կողմից, մեղադրյալը նույնպես ունի իրավունք՝ ներկայացնելու իր պաշտպանությունը և ցանկության դեպքում ցուցմունք տալու: Եթե մեղադրյալը որպես վկա հանդես է գալիս, սպա դատախազությունը կարող է նրան խաչաձև հարցաքննել՝ սակայն դատարանը պետք է երաշխավորի, որ այդ հարցաքննությունը լինի արդար և զերծ անհամապատասխան բնավորության բնութագրումներից կամ չափից դուրս ազդեցիկ տակտիկաներից, որոնք կարող են ոչ պատշաճ ձևով ազդել դատաքննության ելքի վրա:

Սակայն սեռական բռնության գործերով ավելի լուրջ խնդիր է առաջանում այն դեպքում, երբ մեղադրյալը որոշում է իրեն ներկայացնել առանց փաստաբանի և այդ կերպ կարող է անձամբ խաչաձև հարցաքննել տուժողին: Այս իրավիճակը միջազգային փորձի մեջ լայնորեն համարվում է անթույլատրելի՝ հաշվի առնելով կողմերի միջև առկա ուժային անհավասարությունը և այն հոգեբանական վնասը, որ կարող է պատճառվել, երբ տուժողը ստիպված է լինում պատասխանել իր՝ ենթադրյալ բռնարարի ուղիղ հարցերին: Բազմաթիվ երկրներ օրենքով արգելել են սեռական բնույթի հանցագործությունների գործերով տուժողների հարցաքննությունը անձամբ մեղադրյալի կողմից:

## Հարցաքննության գոհակենսատեխնիկաները

Սեռական բռնության գործերով դատավարություններում ինչպես դատախազությունը, այնպես էլ պաշտպանները պետք է հատուկ զգուշությամբ մոտենան իրենց հարցադրումների ձևակերպմանը: Լավագույն միջազգային փորձը խորհուրդ է տալիս խուսափել մեղադրող կամ մեղադրանք ներառող հարցերից, որոնք կարող են ենթադրել սեռական բռնության ենթարկված անձի մեղավորություն: Օրինակ՝ «Ինչու՞ պարզապես չհեռացաք» կամ «Ի՞նչ հագուստ էիք կրում այդ գիշեր» տիպի հարցերը մեղադրող երանգով են հնչում: Փոխարենը, հարցերը պետք է կենտրոնանան փաստերի պարզաբանման վրա՝ առանց մեղադրական ենթատեքստի: Օրինակ՝ «Ի՞նչ արեցիք, երբ նա արեց այս կամ այն բանը»:

Մի շարք երկրների դատական համակարգերում ներդրվել է միջնորդի (intermediary) կամ հաղորդակցման օժանդակողի ինստիտուտը՝ հատկապես այն դեպքերում, երբ տուժողը երեխա է կամ ունի ինտելեկտուալ խնդիրներ: Այդ մասնագետը վերախմբագրում է փաստաբանի հարցերը՝ դարձնելով դրանք հասկանալի և մատչելի վկայի համար: Նման մոտեցումը կարելի է կիրառել նաև մեծահասակ տուժողների դեպքում, որոնց հոգեկան վիճակը կամ տրավման կարող է խանգարել հարցերին ճիշտ արձագանքել:

Բացի այդ, դատավորը պետք է վերահսկի, որ պաշտպանական կողմի կողմից չկիրառվեն հոգեբանական ճնշման տակ դնելու տակտիկաներ, օրինակ՝ նույն փոքր անհամապատասխանության վրա բազմիցս կենտրոնանալը, երբ դա որևէ նշանակություն չունի գործի փաստերի համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Y ընդդեմ Սլովենիայի գործով արձանագրած մոտեցման համաձայն՝ անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն. պաշտպանը պետք է կարողանա փորձարկել ապացույցները, սակայն դատավորները պետք է կանխեն բոլոր այն հարցերը, որոնք ուղղակի նպատակ ունեն նվաստացնել վկային, այլ ոչ թե պարզել իրական փաստերը:

Վերջապես, դատարանի կողմից անհրաժեշտ է ուշադիր հետևել տուժողի հոգեբանական վիճակին: Եթե վկան հարցաքննության ընթացքում ծանր հուզական վիճակում է հայտնվում, ցանկալի է հայտարարել կարճ ընդմիջում՝ նրան հանգստանալու և մտքերը կարգավորելու հնարավորություն տալու համար՝ այլ ոչ թե ստիպել նրան պատասխանել խուճապի կամ նյարդային պոռթկման պահին:

## 4.6. Դատական վերապատրաստում, գենդերային զգայուն բարեփոխումներ և ինստիտուցիոնալ երաշխիքներ

Վերոնշյալ ստանդարտների կիրառումը գործնականում հաճախ պահանջում է ոչ միայն նորմատիվ իրավական փոփոխություններ, այլ նաև մշակութային փոփոխություն արդարադատության համակարգում: Սեռական բռնության գործերով զբաղվող մասնագետների անաչառ և տուժողներին համապատասխան աջակցություն ցուցաբերելու կարողությունը ապահովելու համար կարևոր են դատական և դատախազական վերապատրաստումները, գենդերային զգայուն դատավարական բարեփոխումները և տարբեր ինստիտուցիոնալ երաշխիքները: Միջազգային փաստաթղթերը պետություններին խրախուսում են ներդրում կատարել այս ուղղություններով՝ որպես պատշաճ ջանասիրության (due diligence) պարտավորությունների բաղադրիչ:

### 1 | Մասնագիտական վերապատրաստումներ

Դատավորները, դատախազները, ոստիկանները և փաստաբանները պետք է համապատասխան վերապատրաստում ստանան՝ ճանաչելու և վերացնելու սեռային/գենդերային կանխակալ մոտեցումներն ու բռնաբարության միջերևույթներն իրենց որոշումների մեջ: Ստամբուլի կոնվենցիան հստակ պարտավորեցնում է պետություններին՝ ապահովել կամ ընդլայնել վերապատրաստումները համապատասխան մասնագետների համար՝ ներառյալ՝ «բռնության կանխարգելման և հայտնաբերման, կանանց և տղամարդկանց հավասարության, տուժողների կարիքների և իրավունքների, ինչպես նաև երկրորդային զոհականացման կանխման» հարցերը: Մա ենթադրում է, որ վերապատրաստման ծրագրերում պետք է ընդգրկվեն սեռական բռնության դինամիկան, դրա հոգեբանական հետևանքները և այն լայն տարածված կարծրատիպերը, որոնք խաթարում են արդարադատությունը (օրինակ՝ կեղծ ենթադրությունը, թե կնոջ նախկին սեռական կյանքը կասկածելի է դարձնում նրա բողոքը, կամ որ «իրական» բռնաբարությունը տեղի է ունենում միայն գիշերը և անձանոթի կողմից):

Շատ երկրներում արդեն մշակվել են ուղեցույցներ և ձեռնարկներ՝ դատավորների համար՝ սեռական հանցագործությունների գործերով վարույթի ընթացքում լավագույն փորձերը ներկայացնելու և հնացած, անհիմն մոտեցումներից գերծ մնալու նպատակով: Օրինակ՝ ԱՄՆ-ի «Ազգային դատական կրթության ծրագիրը» տրամադրում է նյութեր՝ զոհերի վարքագիծը հասկանալու և երդվյալ ատենակալներին կանխակալության չտարվելու վերաբերյալ: Կանադայում ընդունվեց նոր օրենք (Bill C-3, 2021), որը պարտադրում է նորանշանակ դատավորներին մասնակցել սեռական բռնության վերաբերյալ օրենքի և սոցիալական համատեքստի վերաբերյալ վերապատրաստմանը, ներառյալ

համաձայնության և միջերի հարցերը, որպեսզի բացառվի որոշումների հիմքում ոչ պատշաճ փաստարկների կիրառումը: Այս բարեփոխումը նախաձեռնվեցին մի շարք հայտնի դատական գործերից հետո, որոնցում դատավորները արտահայտվել էին ոչ զգայուն ձևով (օրինակ՝ «ինչո՞ւ չփորձեցիր փակ պահել ծնկներդ»), ինչը խաթարեց հանրային վստահությունը արդարադատության նկատմամբ:

Մյուս վերապատրաստումները կարևորագույն նշանակություն ունեն. նույնիսկ անկողմնակալ կամ բարի մտադրություններ ունեցող դատավորները կարող են ենթագիտակցաբար կրել կարծրատիպային մտածողություն, որը հնարավոր է բացահայտել և հաղթահարել ուսուցման միջոցով: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) թիվ 33 Ընդհանուր Հանձնարարականը (2015 թ.) կանանց արդարադատության հասանելիության վերաբերյալ, ընդգծում է դատավորների և իրավաբանների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ արդարադատության համակարգը սեռական բռնության և գենդերային բռնության նկատմամբ զգայուն և կանխակալությունից զերծ դարձնելու համար: Իսկ թիվ 35 Ընդհանուր Հանձնարարականը (2017 թ.) կոչ է անում վերապատրաստումների համատեքստում ներառել գենդերային հեռանկար՝ ուղղված այն ինստիտուցիոնալ մշակույթի փոփոխմանը, որն անպատժելիության մթնոլորտ է հանդուրժում:

Վերապատրաստման առանցքային ուղղություններից են՝ ինչպես կատարել տրավմայի մասին տեղեկացված դատական նիստեր, ինչպես կազմել սեռական բռնության հանցագործությունների վերաբերյալ վճիռներ՝ խուսափելով տուժողին մեղադրող կամ վնասը նսեմացնող ձևակերպումներից, և ինչպես գնահատել ցուցմունքների արժանահավաստությունը՝ կանխակալ մոտեցումներից զերծ: Վերապատրաստումները սովորաբար ներառում են վերապրածների և ոլորտի փորձագետների մասնակցություն, ինչպես նաև վերլուծական վարժություններ և օրինակային գործերի ուսումնասիրում: Կարևոր է, որ վերապատրաստումն ընդգրկի նաև իրավապահ մարմինների և դատաբժշկական աշխատակիցների պատրաստվածությունը, քանի որ ապացույցների հավաքագրումն ու վերապրածի հետ շփումը գործի սկզբնական փուլում էական ազդեցություն է ունենում հետագա դատավարության վրա:

Ոստիկանության աշխատակիցները պետք է վերապատրաստվեն՝ ինչպես վերցնել ցուցմունք առանց դատող բնույթի հարցերի, ինչպես նաև ինչպես ճիշտ փաստաթղթավորել համաձայնության բացակայության նշանները՝ ֆիզիկական վնասվածքներից զատ: Դատախազների համար կարևոր է վերապատրաստվել՝ թե ինչպես կառուցել գործեր, որոնք (հնարավորության դեպքում) չեն հիմնվում միայն վերապրածի վկայության վրա, և ինչպես հակազդել պաշտպանական ռազմավարություններին, որոնք հիմնված են սեռական բռնության վերաբերյալ առասպելների և կարծրատիպերի վրա:

## 2 | Գենդերազգայուն դատավարական բարեփոխումներ

Անհատական վերապատրաստումներից զատ, անհրաժեշտ են լայնածավալ դատավարական բարեփոխումներ՝ արդարադատության համակարգում կառուցվածքային արդարության ապահովման նպատակով: Օրինակ, որոշ երկրներում ներդրվել են սեռական բռնության գործերով մասնագիտացված դատարաններ կամ առանձին վարույթներ, որոնցում դատավորները, դատախազները և աշխատակազմը վերապատրաստված են նման գործեր վարելու համար: Այս մոդելը հանգեցնում է հետևողական և զգայուն մոտեցման, բարձր մեղադրական վճիռների քանակի և վերապրածների ավելի մեծ գոհունակության: Այս ուղղությամբ առաջամարտիկներից է Հարավային Աֆրիկան, որտեղ սեռական բնույթի հանցագործությունների դատարանները՝ հիմնադրված դեռևս 2000-ականներին, ապահովում են վերապրածների աջակցման ծառայություններ հենց դատարաններում, երեխաների համար ցուցմունքի նախնական հարցաքննություն՝ CCTV համակարգով առանձին սենյակներում, և գործի քննություն միայն վերապատրաստված մասնագետների կողմից:

Մեկ այլ կարևոր բարեփոխում է սեռական բնույթի հանցագործությունների գործերով դատավարության ժամկետների խիստ կարգավորումը: Վերապրածի տրավման չխորացնելու և ապացույցների արժանահավատությունը չկորցնելու նպատակով միջազգային լավագույն փորձը խրախուսում է այս գործերը դիտարկել որպես առաջնահերթ: Եվրոպական դատարանը քննադատել է պետություններին սեռական բռնության գործերով անհամաչափ ձգձգումների համար: Օրինակ՝ «**V.P. ընդդեմ Բուլղարիայի**» գործում դատարանը խախտում է արձանագրել՝ 15-ամյա ձգձգման համար, որը խախտել է դիմողի անձնական կյանքի իրավունքը: Այս նախադեպերից ելնելով՝ բազմաթիվ երկրներ վերանայում են իրենց դատական օրացույցը՝ սեռական բռնության գործերը առաջնահերթ կարգով քննելու նպատակով:

## 3 | Վերապրածների մասնակցությունն ու աջակցությունը

Վերապրածների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով կարևորվում է մի շարք ինստիտուցիոնալ երաշխիքների ներդրումը: Դրանց թվում է՝ ապահովել վերապրածի իրավունքը ունենալու աջակցող անձ՝ հոգեբան, վերապատրաստված կամավոր կամ իրավապաշտպան, ինչպես ոստիկանությունում, այնպես էլ դատարանում անցկացվող հարցաքննությունների ժամանակ: Որոշ երկրներում սա ամրագրված է օրենքով և պարտադիր կիրառվում է սեռական բնույթի հանցագործությունների գործերով:

Բացի այդ, որոշ փուլերում՝ հատկապես մասնավոր կյանքի վերաբերյալ ապացույցների ընդունելիության քննության ժամանակ, անհրաժեշտ է վերապրածներին տրամադրել անվճար իրավաբանական օգնություն՝ նրանց շահերը լիարժեք պաշտպանելու համար: Ստամբուլի կոնվենցիան խրախուսում է նաև քաղաքացիական հասարակության և գոհերի աջակցության կազմակերպությունների ներգրավումը՝ որպես աջակցող կողմ դատարանի ընթացակարգերում, վերապրածի խնդրանքով: Սա կարող է արտահայտվել, օրինակ, սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասնագետի ներկայությամբ վկայության ընթացքում կամ նույնիսկ նրա կողմից խոսելու հնարավորությամբ, եթե վերապրածը չափազանց տրավմավորված է:

Որոշ իրավական համակարգերում՝ ինչպես Ֆրանսիայում և Բելգիայում, վերապրածներին թույլատրվում է միանալ քրեական գործին որպես քաղաքացիական կողմ՝ այսպիսով ստանալով գործընթացում ձայնի իրավունք, ներառյալ՝ որոշ դատական ակտերի դեմ բողոքարկման հնարավորություն: Թեև այս մոդելը համահունչ չէ բոլոր պետությունների օրենսդրությանը, հիմնական սկզբունքը մնում է նույնը՝ վերապրածին դիտարկել որպես լիիրավ կողմ, այլ ոչ թե որպես փաստական ապացույց: Այս մոտեցումը ոչ միայն բարելավում է վերապրածի փորձառությունը և վստահությունը արդարադատության համակարգի նկատմամբ, այլև խթանում է դեպքերի հաղորդումը և վերապրածի համագործակցությունը դատաքննության մասնակիցների հետ:

## 4 | Կողմնակալության կանխարգելումն ու հաշվետվողականությունը

Կողմնակալության դեմ ինստիտուցիոնալ երաշխիքներ սահմանելը կարող է ներառել վերահսկողության և կարգապահական մեխանիզմների ներդրում: Դատական համակարգերը կարող են ընդունել վարքագծի կանոններ կամ դատավորների ուղեցույցներ, որոնք հստակ արգելում են սեռական խտրականության կամ սեքսիստական վարքի ցանկացած դրսևորում դատական նիստերի ընթացքում: Եթե դատավորը կամ փաստաբանը ծայրահեղ կերպով նվաստացնում է վերապրածին կամ դրսևորում է կողմնակալություն՝ օրինակ, տալով նվաստացուցիչ կամ արդիական չեզոք հարցեր, ապա նման վարքը պետք է ունենա հետևանքներ: Դրանք կարող են լինել՝ վերաքննիչ դատարանի կողմից կողմնակալ դատավճիռների բեկանումը կամ կարգապահական պատասխանատվություն՝ ներառյալ նկատողություն, վերապատրաստման պարտադրանք կամ պաշտոնից հեռացում՝ բացահայտ կողմնակալություն ցուցաբերելու դեպքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերջին տարիներին սկսել է առավել վճռականորեն արձագանքել գենդերային հիմքով դատական կողմնակալությանը՝ ինչի

վկայությունն են նման գործերով որոշումները, ինչպես օրինակ՝ *L. և մյուսները ընդդեմ Ֆրանսիայի* և *I.C. ընդդեմ Մոլդովայի* (2025 թ.): Այս նախադեպերն ընդգծում են, որ դատական կողմնակալությունը ոչ միայն անբարոյական է կամ հակաիրավական, այլ նաև կարող է համարվել մարդու իրավունքների խախտում: Այս համատեքստում պետությունները պարտավոր են ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ներառյալ՝ խնդրահարույց արտահայտություններ պարունակող դատական ակտերի վերանայում, դատավորների լրացուցիչ վերապատրաստում, իսկ ծայրահեղ դեպքերում՝ պաշտոնավարման դադարեցում:

Նույն սկզբունքները պետք է գործեն նաև դատախազական համակարգում: Դատախազության մարմինները կարող են ընդունել ներքին քաղաքականություններ կողմնակալության կանխարգելման համար, օրինակ՝ պահանջելով վերադաս դատախազի հաստատում՝ սեռական բռնության գործը կարճելու որոշում կայացնելուց առաջ: Մա նպաստում է նրան, որ գործի քննությունը դադարեցվի միայն սպացույցների բացակայության հիմքով, այլ ոչ թե վերապրածի արժանահավատության վերաբերյալ կողմնակալ պատկերացումների ազդեցությամբ:

## 5 | Բազմաոլորտային մոտեցումներ

Սեռական բռնությունը բազմաշերտ խնդիր է, որը խաչվում է իրավունքի, հոգեբանության և սոցիալական ոլորտներում: Հետևաբար, ինստիտուցիոնալ լավագույն փորձը պահանջում է բազմաոլորտային մոտեցում. դատարանները պետք է համագործակցեն վերապրածների աջակցող ծառայությունների հետ, իրավապահ մարմինները՝ առողջապահության ոլորտի մասնագետների հետ՝ դատաբժշկական քննությունները պատշաճ կազմակերպելու համար և այլն: Ստամբուլի կոնվենցիան կարևորում է բազմաոլորտային և համակարգված համագործակցությունը՝ թե՛ մասնագիտական վերապատրաստումների, և թե՛ գործերի վարույթի ընթացքում:

Բազմաոլորտային համագործակցության արդյունավետ օրինակ է “Սեռական բռնության արձագանքման թիմ” (Sexual Assault Response Team – SART) մոդելը, որի շրջանակում ոստիկանները, դատախազները, բուժքույրերը և վերապրածների շահերի պաշտպանները գործում են միասին՝ ինչպես գործի կառուցման, այնպես էլ վերապրածին համապարփակ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Երբ մասնագիտական ոլորտների ներկայացուցիչները գիտակցում են միմյանց դերերն ու արդյունավետորեն հաղորդակցվում են, քրեական արդարադատության գործընթացը դառնում է ավելի համահունչ վերապրածի կարիքներին՝ առանց վնասելու արդար դատաքննության հիմնարար սկզբունքները:

## 6 | Անվտանգության ապահովման երաշխիքներ վերապրածների համար

Դատարանները և դատախազները պետք է ունենան հստակ արձանագրված մեխանիզմներ՝ սեռական բռնության գործերով դատավարության ընթացքում և դրանից հետո վերապրածների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը երաշխավորելու համար: Սա ոչ միայն պաշտպանում է վերապրածներին հնարավոր սպառնալիքներից կամ վրեժխնդրությունից, այլև նպաստում է նրանց լիարժեք մասնակցությանը դատական գործընթացին:

## 7 | Կանոնավոր վերանայում և համապատասխանություն

Վերջապես, պետությունները պետք է պարբերաբար վերանայեն իրենց օրենքներն ու գործելակերպը՝ համապատասխանեցնելու դրանք զարգացող միջազգային չափանիշներին: Եվրոպայի խորհրդի GREVIO-ն (Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի փորձագետների խումբ) վերահսկում է Ստամբուլյան կոնվենցիայի իրականացումը և հաճախ առաջարկություններ է անում՝ բարելավելու ուսուցման ծրագրերը, ընթացակարգերը և ռեսուրսների բաշխումը: Նմանապես, «Կանանց նկատմամբ բոլոր ձևերի խտրականության վերացման մասին» կոնվենցիայի անդամ պետությունների զեկույցների քննարկումները հաճախ ընդգծում են ուսուցման կամ մասնագիտացված ծառայությունների անհրաժեշտությունը: Քաղաքականության մշակողները պետք է դրանք դիտարկեն որպես համակարգը կատարելագործելու հնարավորություններ: Օրինակ, եթե տվյալները ցույց են տալիս, որ որոշակի տարածաշրջանների դատարանները սեռական բռնության գործերով կայացնում են արդարացման վճիռներ անսովոր բարձր թվերով՝ անձնական վերաբերմունքից բխող և գործի հետ կապ չունեցող հանգամանքները հաշվի առնելու պատճառով, ապա կարող են անհրաժեշտ լինել նպատակային միջամտություններ (օրինակ՝ պարտադիր դատական սեմինարներ կամ այդ գործերը այլ մասնագետներին հանձնարարելը):

Ամփոփելով՝ միջազգային չափանիշները դատարանի առօրյա իրականության մեջ ներդնելը պահանջում է ներդրումներ կատարել մարդկանց և գործընթացների մեջ: Ուսուցման ծրագրերը սերմանում են ճիշտ մտածելակերպ և գիտելիքներ: Գեներալիզացիոն բարեփոխումներն օրենքի մի մասն են, իսկ ինստիտուցիոնալ երաշխիքները ապահովում են, որ երբ առանձին գործող մասնագետները սխալվում են, համակարգը ինքնուրույն շտկվում է: Նպատակային արդյունքը արդարադատության համակարգ է, որտեղ սեռական բռնության գործերը քննվում են գրագետ, կարեկցանքով և առանց կողմնակալության, այդպիսով խրախուսելով տուժողներին արդարադատություն փնտրել

և ամրապնդել օրենքի գերակայությունը:

Որպես քաղաքականության ուղեցույցի կարևոր մաս՝ լավ օրենքների մշակումը միայն առաջին քայլն է. դրանց իրականացումը շարունակական կրթության, վերահսկողության և աջակցության համակարգերի միջոցով է, որ իսկապես վերափոխում է սեռական բռնության դատական գործընթացը՝ համաձայն մեր կողմից ուսումնասիրած լավագույն փորձի:

## Գրականության ցանկ

Եվրոպայի խորհրդի Կոնվենցիա՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ (Ստամբուլի Կոնվենցիա) — հոդվածներ 36, 54 և 56:

[Council of Europe, Istanbul Convention, 2011]

Մ.Ս. ընդդեմ Բուլղարիայի, ՄԻԵԴ վճիռ 04.12.2003 — դատարանը գտել է, որ Բուլղարիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածները՝ չձեռնարկելով պատշաճ քննություն՝ առանց դիմադրության ապացույցների առկայության: [ECtHR, M.C. v. Bulgaria, 2003]

X և Այլք ընդդեմ Կիպրոսի, I.C. ընդդեմ Մոլդովայի, L. և Այլք ընդդեմ Ֆրանսիայի, ՄԻԵԴ վճիռներ, 2025թ. — դատարանը դատապարտել է դատավարության ընթացքում սեռային կարծրատիպերի կիրառումն ու երկրորդային վիկտիմիզացիան: [ECtHR, 2025 Judgments]

Y. ընդդեմ Սլովենիայի, ՄԻԵԴ վճիռ 28.05.2015 — դատարանը արձանագրել է ՄԻԵԴ 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում՝ երբ մեղադրյալը անձամբ խաչաձև հարցաքննել է վերապրածին՝ նրան վախեցնելով ու նվաստացնելով: [ECtHR, Y. v. Slovenia, 2015]

Կանանց խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (CEDAW), Թիվ 35 Ընդհանուր Հանձնարարական (2017) — պետությունները պարտավոր են արդյունավետորեն հետաքննել, դատական կարգով հետապնդել և պատժել գենդերային բռնության բոլոր ձևերը՝ խուսափելով միջնորդությունից՝ առանց պատշաճ երաշխիքների: [CEDAW General Recommendation No. 35, 2017]

Միջազգային Քրեական Դատարան (ՄՔԴ), «Սեռական և գենդերային հանցագործություններ» (2015) — սահմանում է ապացույցների ընդունելիության սկզբունքներ՝ բացառելով նախորդ սեռական վարքագծի հիման վրա գնահատումը և հաստատման լրացուցիչ պահանջները: [Coalition for the ICC, 2015]

ՄԹ Կառավարություն, Ընտանեկան բռնության մասին օրինագիծ (2020), Դատարաններում հատուկ միջոցների փաստաթուղթ — հաստատում է, որ սեռական հանցագործությունների վերապրածները կարող են ցուցմունք տալ պաշտպանիչ միջոցների կիրառմամբ (էկրան, տեսագանգ)՝ առանց արդար դատաքննության իրավունքի խախտման: [UK Government, Domestic Abuse Bill 2020]

Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի բանավեճ (Hansard), Երիտասարդական արդարադատության և քրեական ապացույցների մասին օրենք, 1999թ. — հաստատել է արգելք՝ սեռական բռնության վերապրածներին անձամբ խաչաձև հարցաքննելու հնարավորության վրա՝ կանխելու նրանց նկատմամբ վախեցնող ազդեցությունը:  
[UK Parliament, Hansard, 1999]

Amnesty International, Շվեդիայի 2018թ. համաձայնության հիմքով օրենսդրության մասին

OJP Washington Law Journal, բռնաբարության հետտրավմատիկ համախտանիշի (RTS) և փորձագիտական ցուցմունքի վերաբերյալ

CEDAW, Թիվ 19 Ընդհանուր Հանձնարարական (1992թ.), ըստ որի՝ կանանց նկատմամբ բռնությունը համարվում է խտրականության ձև:

## Գլուխ 5.

# Սեռական բռնության գործերի դատաքննության համակարգային մարտահրավերներ

Սեռական բռնության գործերի դատաքննությունը Հայաստանում շարունակում է ունենալ խորը արմատացած ընթացակարգային թերություններ, որոնք խոչընդոտում են արդարադատության իրականացմանը: Իրավական գործընթացում դիտարկվող մի շարք պրակտիկաներ՝ քննչական հարցաքննություններից մինչև դատարանում գործի քննությունը, բացահայտում են տուժողների մասնակցության, ընթացակարգային արդարության և տրավմայի նկատմամբ զգայուն վերաբերմունքի ձևավորման մշտական խոչընդոտներ: Այս համակարգային խնդիրները խաթարում են սեռական բռնության մասին հաղորդողների իրավունքները և նպաստում են ինստիտուցիոնալ անվստահության և անպատժելիության ավելի լայն օրինաչափությունների ձևավորմանը:

Այս գլուխը ներկայացնում է մշտադիտարկված երեք գործերի անանուն ամփոփագրերը և դիտարկված գործերի հիման վրա վերլուծությունը: Բոլոր անձնական տվյալները, այդ թվում՝ անունները, կոնկրետ ամսաթվերը, վայրերը, գործի համարները, և մնացած բոլոր հանգամանքները, որոնք կարող էին նույնականացնել տուժողներին կամ ամբաստանյալներին հեռացվել են՝ համաձայն միջազգային իրավունքի՝ գաղտնիության և սեռական բռնություն վերապրած անձանց պաշտպանության չափանիշների:

## 5.1. Ընտրված գործերի համառոտ նկարագիր

### Գործ 1

Իբրար ծանոթ կին և տղամարդ ճաշելուց հետո գնացել են մոտակա հյուրանոց: Ալկոհոլի ազդեցության տակ գտնվող տղամարդը ցանկություն է հայտնել սեռական հարաբերություն ունենալու: Երբ կինը հրաժարվել է, տղամարդը արձագանքել է ֆիզիկական ագրեսիայով և փորձել է սկսել առանց համաձայնության սեռական ակտ: Տղամարդը մի քանի անգամ հարձակվել է կնոջ վրա: Կինը ստացել է բազմաթիվ վնասվածքներ:

### Գործ 2

Մեղադրյալը խաբեությամբ առաջարկել է տուժողին նստել ավտոմեքենա և տեղափոխել մեկուսացված վայր: Այնտեղ մեղադրյալը ֆիզիկական ուժ գործադրելով փորձել է տուժողի կամքին հակառակ սեռական գործողություններ իրականացնել: Տուժողը դիմադրել է և կարողացել է փախչել: Գործողությունը մեղադրյալի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցվել:

### Գործ 3

Մեկ այլ միջադեպի ժամանակ մի կին միայնակ նստած էր հանրային տարածքում, երբ նրան մոտեցել է մի անծանոթ: Տղամարդը բռնել է նրան, սպառնացել սեռական և ֆիզիկական բռնության դիմել և գետնին հրել: Այնուհետև նա մերկացել է և սեռական բնույթի բացահայտ և բռնի գործողություններ է կատարել կնոջ առջև:

## 5.2. Մշտադիտարկման հիմնական արդյունքները

### 5.2.1. Երկրորդային զոհականացում և ընթացակարգային երաշխիքների թերություններ

Սեռական բռնության մասին հաղորդում ներկայացրած անձինք հաճախ ենթարկվում են այնպիսի պրակտիկայի, որը բավարար չափով հաշվի չի առնում տրավմայի հոգեբանական հետևանքները կամ ցուցնունքի ստացման նկատմամբ պահանջվող զգայուն ընթացակարգային մոտեցումը: Հարցաքննությունները հաճախ պահանջում են դեպքի բազմակի մանրամասն նկարագրություն՝ այն պայմաններում, որոնք կարող են լինել ֆորմալ, անհարմար կամ նույնիսկ հակադրական: Չնայած այն հանգամանքին, որ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածը նախատեսում է քննչական գործողությունների ձայնագրում՝ կրկնությունից խուսափելու նպատակով, այդ դրույթի կիրառումը մնում է ոչ համակարգված և ոչ միանշանակ: Ծատ դեպքերում հարցաքննությունները կրկնվում են դատավարական տարբեր փուլերում՝ առանց վիկտիմիզացիայի կրկնության նվազեցման ուղղությամբ բավարար ջանքերի:

Հարցաքննությունների և դատական նիստերի անցկացումն ակնհայտորեն չի համապատասխանեցվում ցուցմունք տվող անձանց կարիքներին: Իրավապահ և քննչական աշխատակիցները երբեմն կիրառում են հարցադրումների ոճ կամ լեզու, որոնք կարող են լինել ոչ պատշաճ կամ հոգեբանորեն վնասակար, հատկապես այն դեպքերում, երբ բացակայում է հոգեբանական աջակցությունը: Այս հանգամանքները բացասաբար են ազդում ոչ միայն ցուցմունքների որակի, այլև անձանց՝ արդարադատության համակարգի հետ շարունակական ներգրավվածության պատրաստակամության վրա:

### **5.2.2. Ուղղակի առերեսում մեղադրյալի հետ**

Գործող դատավարական պրակտիկան, որը թույլ է տալիս սեռական բռնության մասին հաղորդում ներկայացրած անձի և մեղադրյալի միջև ուղղակի առերեսում, շարունակում է պահպանվել որպես տարածված երևույթ: Քրեական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածով սահմանված առերեսման ինստիտուտը, որն ի սկզբանե նախատեսված է ցուցմունքների միջև հակասությունները պարզաբանելու համար, սեռական բռնության գործերում հաճախ ունի հստակ կրկնատրավմատիզացնող ազդեցություն:

Նման հանդիպումները հաճախ իրականացվում են առանց պատշաճ ընթացակարգային երաշխիքների, ինչպես օրինակ՝ պաշտպանիչ վարագույրների, հեռավար վկայության հնարավորության կամ նույնիսկ դատարանի դահլիճ մուտք գործելու առանձին մուտքերի ապահովման: Առերեսման ընթացքում հոգեբանական նախապատրաստության և պաշտպանիչ միջոցների բացակայությունը կարող է լրջորեն վտանգել թե՛ վերապրածի հոգեկան վիճակը, թե՛ նրա՝ դատավարությանը լիարժեք և արդյունավետ մասնակցելու կարողությունը: Այսպիսի հակադիր և վտանգավոր միջավայրերը հիմնովին հակասում են արդարադատության նկատմամբ տրավմայի մասին տեղեկացված մոտեցման սկզբունքներին:

### **5.2.3. Դատավարական հարմարեցումների և մասնագիտացած աջակցության բացակայություն**

Սեռական բռնության գործերով դատավարությանը մասնակցող անձանց համար կայուն և հետևողական դատավարական հարմարեցումների բացակայությունն էական խնդիր է: Դատաքննությունն իրականացնելիս տուժողը շատ հաճախ մնում է առանց աջակցող մասնագետի աջակցության, կամ պաշտպանական միջոցներ պահանջելիս որոշ իրավական երաշխիքներ բացակայում են: Թեպետ գործող օրենսդրությամբ որոշ դեպքերում պահանջվում է հոգեբանի մասնակցություն, այս երաշխիքը հաճախ գուրկ է արդյունավետությունից՝ հաշվի առնելով տրավմայի և դատական հարցաքննության ոլորտում մասնագիտացած անձանց սուղ քանակը:

Քաղաքային կենտրոններից դուրս իրավիճակն առավել մտահոգիչ է. որակավորված հոգեառօգնական աջակցությունը գրեթե անհասանելի է: Այն դեպքերում անգամ, երբ հոգեբաններ ներգրավվում են դատավարությանը, համապատասխան վերապատրաստման պակասը

հանգեցնում է նրան, որ նրանք ի վիճակի չեն կանխել ոչ պատշաճ հարցադրումները կամ վերապրածի կրկնաբռնությունը: Այս դատավարական աջակցման խախտումները, ի վերջո, լրջորեն վնասում են թե՛ ապացույցների որակին, թե՛ ողջ դատական գործընթացի արդարությանը:

#### **5.2.4. Անբավարար պաշտպանություն անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ**

Թեև գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս սեռական բռնության գործերով նիստերը անցկացնել դռնփակ ձևաչափով, սակայն կիրառման պրակտիկայում առկա բացերը շարունակական վտանգ են ներկայացնում՝ մեղադրանքի ենթարկող անձանց նույնականացման և հասարակական պիտակավորման առումով: Հատուկ զգայուն գործերով որոշ դեպքերում անձնական տվյալները՝ ներառյալ անունները և գործի մանրամասները, հայտնվել են դատական տեղեկատվական շտեմարաններում կամ լրատվամիջոցներում: Այսպիսի գաղտնիության խախտումները ոչ միայն մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում են, այլ նաև ստեղծում են լրացուցիչ խոչընդոտներ՝ սեռական բռնության դեպքերի հաղորդման և դատավարական գործընթացներին մասնակցության համար:

Թեև դատարաններն ունեն հնարավորություն և հայեցողություն՝ ապահովելու նիստերի դռնփակ անցկացում և անձնական տվյալների պաշտպանություն, որոշումների կայացման գործընթացը մնում է անհավասարաչափ և պակասում են հստակ ընթացակարգային ուղեցույցներ: Անհրաժեշտ է գաղտնիության պաշտպանության միջոցների հետևողական և ուժեղացված կիրառում՝ ապահովելու անձի արժանապատվությունը, նվազեցնելու սեռական բռնություն վերապրած անձի վնասը և երաշխավորելու, որ արդարադատության հասանելիությունը չուղեկցվի բացահայտման սպառնալիքով:

#### **5.2.5. Դատավարական ձգձգումներ և դատական համակարգի անարդյունավետություն**

Դատավարական գործընթացում ի հայտ եկած ամենահրատապ համակարգային խնդիրներից մեկը վերաբերում է գործերի շարունակական ձգձգումներին: Մոնիթորինգի շրջանակում ուսումնասիրված բոլոր երեք գործերում դատաքննությունը տևել է երեքից չորս տարի՝ յուրաքանչյուր դեպքում ներառելով ավելի քան 30 դատական նիստ: Այս տարիների ընթացքում նիստերի մեծ մասը հետաձգվել է մեղադրյալի բացակայության պատճառով: Նման չներկայանալը ոչ միայն ձգձգել է արդարադատության իրականացումը, այլև խորացրել է վերապրածների հոգեբանական տառապանքը՝ ստիպելով նրանց անընդհատ վերապրել տեղի ունեցածը՝ սպասելով հերթական դատական նիստին:

Գործերի քննության ողջ ընթացքում հաճախակի փոփոխվել են ինչպես դատավորները, այնպես էլ՝ դատախազներն ու մեղադրյալի պաշտպանները: Նիստերի մի շարք հետաձգումներ պայմանավորված են եղել նաև մեղադրյալին դատարան տեղափոխելու ուստիկանության անկարո-

դությանը՝ վերջինիս գերծանրաբեռնվածության պատճառով, չնայած այն հանգամանքին, որ մեղադրյալը կալանքի տակ է գտնվել: Յուրաքանչյուր նման փոփոխություն պահանջել է, որ նոր ներգրավված մասնակիցները կրկին ծանոթանան գործի նյութերին՝ հանգեցնելով նոր ձգձգումների և բարդությունների: Բացի այդ, նիստերի միջև մշտապես առկա է եղել առնվազն մեկ ամսվա դադար, ինչը զգալիորեն երկարացրել է դատաքննության ընդհանուր տևողությունը և նվազեցրել դատական համակարգի արդյունավետությունը:

Այս ձգձգումները պարզապես վարչարարական խնդիր չեն: Դրանք ունեն խորքային հետևանքներ վերապրածների համար՝ ստիպելով վերջիններիս բազմիցս վերապրել իրենց հոգեբանական տրավման, դանդաղեցնելով ապաքինման գործընթացը և խորացնելով իրենց հոգեկան վիշտն ու խառնաշփոթը: Արդարադատության ուշացումը լրջորեն խաթարում է վերապրածների վստահությունը իրավական համակարգի նկատմամբ՝ առաջացնելով լքվածության և անպաշտպանության զգացողություն:

### **5.3. Գենդերային խտրականություն և սեռական բռնության վերաբերյալ միջերի վերարտադրում դատարանում**

Հայաստանի դատական համակարգում սեռական բռնության գործերի քննության ընթացքը վկայում է լուրջ համակարգային խնդիրների առկայության մասին, որոնք խոչընդոտում են վերապրածների արդարադատությանը հասնելու հնարավորությունը: Մոնիթորինգի շրջանակում դիտարկված երեք գործերը բացահայտում են այս մարտահրավերները՝ ընդգծելով դատավարական համակարգի անարդյունավետությունները, համակարգային ձգձգումները, և գենդերային խտրականությունը, որոնք խաթարում են իրավական գործընթացի ամբողջականությունն ու արդյունավետությունը: Սույն բաժինը կանդրադառնա գենդերային խտրականությանը և մոնիթորինգի ընթացքում ի հայտ եկած միջերի և կարծրատիպերը:

## **1) Հայաստանում սեռական բռնության գործերի դատական մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված միջերն ու կարծրացած ընկալումները**

Սեռական բռնության վերաբերյալ միջերն ու ընդհանրացված ոչ գիտական պատկերացումները զգալիորեն ազդում են տուժողների՝ արդարադատությանը դիմելու փորձառության վրա: Այս միջերը տարածում են վնասակար կարծրատիպեր թե՛ բռնաբարության տեղի ունենալու պայմանների, և թե՛ տուժողների ու մեղադրյալների վարքագծի վերաբերյալ: Մոնիթորինգի ընթացքում նման միջերն ու պատկերացումներ արձանագրվել են գործին մասնակից բոլոր կողմերի՝ դատավորների, դատախազների, մեղադրյալների պաշտպանների, ինչպես նաև տուժողի ներկայացուցիչ իրավաբանների խոսքում ու հայտարարություններում, ինչպես նաև պաշտպանա-

կան մարտավարություններում: Սա անակնկալ չէ՝ հաշվի առնելով, որ բռնաբարության մշակույթը խորապես արմատավորված է Հայաստանի հասարակության մտածողության տարբեր շերտերում, և դրա վերացումը կամ ապամոնտաժումը պահանջում է նպատակային և հետևողական աշխատանք:

Ստորև ներկայացված եզրահանգումները հիմնված են մոնիթորինգի շրջանակում դիտարկված երեք կոնկրետ գործերի վրա: Սակայն, եթե դիտարկումների ծավալն ավելի լայն լիներ, ապա հնարավոր է՝ ի հայտ կգային նաև սեռական բռնության հետ կապված այլ տարածված միջեր՝ ավելին, քան ներկայացված են այստեղ:

## **Միջ 1. «Իսկական» սեռական բռնությունն անպայման ներառում է ֆիզիկական բռնություն և տեսանելի վնասվածքներ, իսկ տուժողների կողմից կեղծ մեղադրանքները (սուտ մատնությունները) տարածված են:**

### **Տուժողի արժանահավատության հարցականացում**

Դատավարության ամբողջ ընթացքում տուժողների արժանահավատությունը բազմիցս հարցականի տակ է դրվել դատավարության մասնակիցների կողմից: Այս մոտեցումն արտացոլում է բռնաբարության մասին այն տարածված միջբը, թե իբր կեղծ մեղադրանքները սովորական են, ինչը խորապես վնասում է սեռական բռնություն վերապրած անձի արդարություն պահանջելու փորձառությանը: Տուժողներին տրվել են բազմաթիվ կրկնվող և միանման հարցեր՝ հատկապես մեղադրյալների պաշտպանների կողմից: Շատ դեպքերում նույն հարցերը բազմիցս կրկնվել են՝ ստիպելով տուժողին արդարանալ կամ նորից ու նորից պաշտպանել իր արժանահավատությունը: Այս բազմակի հարցաքննությունները հաճախ հասցրել են տուժողներին արտասովելու եզրին, քանի որ նրանք ստիպված են եղել կրկին ու կրկին ներկայացնել իրենց տրավմատիկ փորձառությունը՝ դատարանին համոզելու համար, որ իրենք ասում են ճշմարտությունը:

Այս վերաբերմունքը ոչ միայն հոգեբանականորեն ծանրաբեռնող է, այլև խաթարում է արդարադատության զոհակենտրոն սկզբունքները՝ անհամաչափ բեռ դնելով տուժողի վրա՝ իր ազնվությունն ապացուցելու նպատակով: Նման հարցաքննությունները գրեթե երբեք չեն ընդհատվել ոչ դատավորի, ոչ էլ նույնիսկ տուժողի ներկայացուցչի կողմից:

Արդյունքում դատարանի դահլիճը դառնում էր վերապրածի արժանապատվության ու հոգեկան անվտանգության խախտման տարածք:

Սա, սակայն, հաճախ առաջացնում է մեկ ընդհանուր հարց. բայց չէ՞ որ օրենքի առաջ բոլորը հավասար են: Ինչու՞ պետք է սեռական բռնության գործերի դեպքում լինի այլ մոտեցում:

Միջազգային իրավական փաստաթղթերը՝ Ստամբուլյան կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը, պարտադրում են պետություններին ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ՝ վերապրածներին երկրորդային վնասումից պաշտպանելու և նրանց արժանապատվությունը պահպանելու համար:

Տրավմայի մասին տեղեկացված զգայուն արդարադատությունը արտոնություն չէ. դա իրավական պարտավորություն է, որն օգնում է ամրապնդել դատական գործընթացի հանդեպ վստահելիությունը: Այն կարող է ներառել՝

Վեռավար կամ պաշտպանիչ էկրանով հարցաքննություն

Նախապես ձայնագրված ամբողջական ցուցմունք, որը կօգտագործվի ողջ գործընթացում

Հատուկ վերապատրաստված աջակցող անձի ներկայություն հարցաքննության ընթացքում

Մեղադրյալի հետ ուղղակի առերեսումից խուսափելու մեխանիզմներ

## **Շեշտադրումը ֆիզիկական դիմադրություն և տեսանելի վնասվածքների վրա**

Դատարանի (դատավարության բոլոր մասնակիցների) ուշադրությունը ֆիզիկական բռնության և տեսանելի վնասվածքների հանդեպ ընդգծում է դատավարության մեջ ամկա հիմնարար խնդիրներից մեկը: Տուժողներին ու վկաներին շարունակաբար տվել են հարցեր իրենց արտաքինի վերաբերյալ՝ ներառյալ այն, թե ի՞նչ հագուստ են կրել դեպքի օրը և ի՞նչ վիճակում է եղել այդ հագուստը: Այս հարցադրումները վկայում են «իսկական» սեռական բռնության մասին հնացած պատկերացումների գերակայության մասին, համաձայն որի միայն ֆիզիկական բռնության և մարմնական վնասվածքների առկայության դեպքում կարող է գործը դիտարկվել արժանահավատ:

Դատավարության ընթացքում պարբերաբար հիշատակվել է նաև «առավելագույն դիմադրության» հասկացությունը: Դատարանը փորձել է պարզել՝ արդյոք տուժողը ցուցաբերել է բավարար դիմադրություն՝ մանրամասն հարցեր տալով այն մասին, թե նա արդյոք հրել է մեղադրյալին, գոռացել է օգնության համար կամ փորձել է փախչել: Նման շեշտադրումը անտեսում է սեռական բռնության բարդ հոգեբանական և իրավիճակային դինամիկան, երբ վերապրածները միշտ չէ, որ կարողանում են դիմադրել ֆիզիկապես՝ վախի, շոկի, իշխանական հարաբերությունների, ֆինանսական կամ այլ տիպի կախվածության կամ հարկադրանքի պատճառով:

## **Դեպքից հետո անմիջապես ձեռնարկված գործողությունները**

Դատարանը քննության էր առել նաև տուժողների վարքը դեպքից անմիջապես հետո, մասնավորապես՝ որքան արագ են նրանք դիմել ոստիկանություն և ի՞նչպես են արտահայտել իրենց հուզական վիճակը:

Դատական գործընթացում նկատվում էր անուղղակի ակնարկ կամ ակնկալիք, ըստ որի՝ «խսկական» տուժողը պետք է դրսևորի որոշակի վարքագիծ՝ օրինակ՝ անհապաղ հաղորդի դեպքի մասին իրավապահ մարմիններին, արտահայտի ակնհայտ հուզմունք, ներառյալ շնչահեղձություն կամ խուճապային արձագանքներ: Մակայն այս մոտեցումը չի հաշվի առնում սեռական բռնություն վերապրած անձանց հոգեբանական բազմազան արձագանքները, որոնք պայմանավորված են հարձակման ժամանակ և դրանից հետո ստացած հոգեմարմնական ազդեցություններով:

## **Միջ 2. Տուժողը կարող է հրահրել սեռական բռնությունը իր վարքագծով, տեսքով, հագուստի ընտրությամբ կամ որոշ վայրերում գտնվելով (օրինակ՝ հյուրանոցային սենյակ, հանրային տարածքներ և այլն)»:**

Դիտարկումը ցույց է տալիս տուժողների նկատմամբ մեղադրողական վերաբերմունքի տարածված բնույթը, երբ տուժողի վարքը, հագուստը կամ որոշակի վայրում գտնվելը դառնում են քննության առարկա՝ իբր հարձակում սադրելու հիմքեր, ինչն իր հերթին կազմում է համաձայնության առկայության մասին թյուր կարծիք: Այս վտանգավորն սխալ պատկերացումը ոչ միայն պատասխանատվությունը դնում է տուժողի վրա, այլև ամրապնդում է այն կարծրատիպերը, որոնք հանգեցնում են սեռական բռնության լրջության ընկալման բացակայությանը:

Դատական գործընթացի ընթացքում զգալի ուշադրություն է դարձվել տուժողների վարքին և հագուստին՝ միջադեպի օրը: Դատարանը մանրամասն հարցաքննել է տուժողներին՝ իմանալու համար, թե ի՞նչու են նրանք համաձայնել հանդիպել ենթադրյալ հանցագործի հետ, ի՞նչ բնույթի հարաբերություն է եղել նրանց միջև, և ի՞նչ հագուստ են կրել այդ պահին: Այսպիսի հարցադրումները ակնարկում էին նրա մասին, թե իբր տուժողների որոշումները կարող էին նպաստել բռնությանը՝ ամրապնդելով այն կարծրատիպը, թե զոհերը սեռական բռնություն են սադրում իրենց վարքով կամ արտաքինով:

Բացի այդ, հանցագործության դեպքի վայրն օգտագործվել է տուժողների ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելու և համաձայնության առկայության համար: Այսպես, պաշտպանական կողմը հաճախ պնդել է, որ տուժողի համաձայնությունը մեկուսացված վայր մեկնելու՝ ենթադրյալ հանցագործի հետ, նշանակում է սեռական հարաբերության ունենալու համաձայնություն: Այսպիսի դիրքորոշումը անտեսում է հոգեբանական ճնշման և հարկադրանքի համատեքստը, որին շատ տուժողներ ենթարկվում են, և վերարտադրում է այն միջքը, թե որոշ վայրերում գտնվելը կարող է հանգեցնել սեռական բռնության:

Չոհին մեղադրելու մոտեցումը լրջորեն խաթարում է արդարադատության գործընթացը՝ շեղելով ուշադրությունը հանցագործի գործողություններից դեպի տուժողի վարքը: Տվյալ գործերի շրջանակում դատարանի ուշադրությունը տուժողի հագուստի և վարքի վրա նվազեցրել է հիմնական հարցի՝ ենթադրյալ հանցագործի կողմից համաձայնության առկայության պարզման կարևորությունը: Այս մոտեցումն անհարկի կերպով կրկին հոգեբանորեն վնասել է տուժողին և խաթարել արդարադատության հասնելու հնարավորությունը:

Սեռական բռնության վերաբերյալ միֆերը ու գենդերային կարծրատիպերը ոչ միայն արժեզրկում են վերապրածների արժանահավատությունը, այլև էական ազդեցություն են ունենում դատական գործընթացների վրա: Դրանք կարող են հանգեցնել կողմնակալ քննությունների, ոչ պատշաճ ապացույցների հավաքման և անարդար դատավճիռների: Օրինակ՝ համաձայնության բացակայությունը ապացուցելու համար ֆիզիկական դիմադրության վրա հիմնվելու պահանջը անտեսում է այն բազմաթիվ իրավիճակները, երբ սեռական բռնությունն իրականանում է հարկադրանքի կամ անձի անկարողության պայմաններում: Այս հնացած պատկերացումն առկա է այն իրավական համակարգերում, որոնք դեռ պահանջում են բռնի ուժի կամ սպառնալիքի ապացույց՝ բռնաբարության փաստը հաստատելու համար:

# Ամփոփում և առաջարկություններ

Սույն զեկույցը ներկայացնում է սեռական բռնության գործերի քննության խորքային ուսումնասիրություն Հայաստանի Հանրապետությունում՝ հիմնված ընտրված դատական գործերի մոնիթորինգի և իրավական վերլուծության վրա: Վերհանվել են խորապես արմատացած դատավարական թերություններ, գենդերային խտրականություն և համակարգային խոչընդոտներ, որոնք խանգարում են տուժողներին արդարադատության հասնել: Չնայած Հայաստանն իրականացրել է որոշ քայլեր՝ իր օրենսդրությունը համահունչ դարձնելու միջազգային պարտավորություններին՝ զոհակենտրոն արդարադատության իրականացումը մնում է մտահոգիչ:

Դիտարկված դատական նիստերը բացահայտում են արդարադատության մի համակարգ, որը հաճախ ոչ թե պաշտպանում, այլ վերատրամատիզացնում է վերապրածներին: Սեռական բռնության ենթարկված անձինք բախվում են երկարաձգված դատավարական գործընթացների, ագրեսիվ խաչաձև հարցաքննության, գաղտնիության անբավարար ապահովման և դատավարական մի մշակույթի, որը ներծծված է սեռական բռնության վերաբերյալ վնասակար, ոչ գիտական և խտրական կարծրատիպերով: Այս պայմանները ոչ միայն խախտում են միջազգային իրավական չափանիշները, այլև հարված են հասցնում արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահությանը՝ այդպիսով չթողնելով սեռական բռնության ենթարկված անձանց դիմել օգնության և ամրապնդելով լռության ու անպատժելիության մշակույթը:

## Ամփոփում

Բացի այդ, տրավմայի նկատմամբ զգայուն մոտեցումների, համապատասխան դատավարական հարմարեցումների և ինստիտուցիոնալ երաշխիքների բացակայությունը վերարտադրում է այնպիսի դատական միջավայր, որը չի արտացոլում սեռական բռնության հոգեբանական, սոցիալական և իրավական առանձնահատկությունները: Այս թերությունների կուտակային ազդեցությունն է արդարադատության, արժանապատվության և պաշտպանության համակարգային մերժումը:

Մարդու իրավունքների ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների լիարժեք կատարումը և հավասարության, արժանապատվության ու պատշաճ դատավարության վրա հիմնված իրավական մշակույթի ձևավորումը պահանջում են Հայաստանից շտապ և համապարփակ բարեփոխումներ: Վերջիններս պետք է գերազանցեն օրենսդրական ձևական փոփոխությունները՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, մշակութային փոփոխություն և զոհակենտրոն դատական ընթացակարգերի ներդրում: Ստորև ներկայացված են այդ նպատակներին հասնելու համար առաջարկվող հիմնական քայլերը:

# Առաջարկություններ

## I. Իրավական և քաղաքական բարեփոխումներ

- Ընդունել սեռական բռնության՝ **համաձայնության** կոնցեպտի վրա հիմնված սահմանում համահունչ Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածին՝ հիմքում ունենալով ազատ կամքով տրված համաձայնության բացակայությունը, այլ ոչ թե՝ ֆիզիկական դիմադրության կամ բռնի ուժի կիրառման ապացույցները:
- Նախատեսելով սեռական բռնության գործերով դատական նիստերի փակ ընթացք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերապրածն ինքն է ցանկանում բաց դատավարություն, ինչպես նաև ապահովել նրա անձի ամբողջական գաղտնիությունը դատական արձանագրություններում և հանրային տվյալների շտեմարաններում, ինչպիսին է Դատալեքս համակարգը:
- Օրենսդրորեն ամրագրել դատավարական հարմարեցումների իրավունքը, ներառյալ՝ հեռավար ցուցմունք տալու, աջակցող անձ ունենալու և մեղադրյալի հետ ուղղակի առերեսումից պաշտպանված լինելու իրավունքը:

## II. Դատական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ

- Պարտադիր դարձնել շարունակական և համապարփակ վերապատրաստում դատավորների, դատախազների, պաշտպանների և քննիչների համար՝ ներառյալ տրավմայի վերաբերյալ գիտելիքները, գենդերային կարծրատիպերի ճանաչումը և սեռական բռնության վերաբերյալ միջազգային իրավական ստանդարտները:
- Սահմանել մասնագիտացված ստորաբաժանումներ կամ դատական կազմեր՝ սեռական բռնության գործերով, որոնք կունենան գենդերային բռնության և վերապրածի իրավունքների վրա հիմնված փորձառություն:
- Դատական գործընթացում ներգրավել վերապրածների աջակիցներ կամ դատարանի կողմից նշանակված օժանդակող մասնագետներ՝ գործընթացում աջակցություն ցուցաբերելու և կողմնորոշվելու նպատակով:

## III. Դատավարական երաշխիքներ և տուժողի պաշտպանություն

- Ապահովել տուժողներին առանց մեղադրյալի հետ ուղղակիորեն առերեսվելու ցուցմունք տալու հնարավորությամբ՝ օգտագործելով պաշտպանիչ միջոցներ, տեսազանգի համակարգեր կամ գրավոր ցուցմունք:
- Հստակ տեղեկացնել վերապրածին իր իրավունքների մասին դատավարության բոլոր փուլերում՝ ներառյալ իրավաբանական աջակցություն ստանալու, պաշտպանության միջոցներ կիրառելու և բողոքարկման հնարավորությունների վերաբերյալ:

- Կիրառել դատավորի միջամտության հստակ արձանագրություններ այն դեպքերի համար, երբ հարցաքննության ընթացքում տրվում են ոչ առնչելի, վնասակար կամ վերատրավմատիզացնող հարցեր:
- Ընդլայնել տրավմայի հանդեպ գիտակից հոգեբանների և փորձագետների հասանելիությունը՝ աշակցություն ցուցաբերելու նպատակով ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում՝ հատկապես Երևանի սահմաններից դուրս:
- Ընդլայնել տրավմայի հանդեպ գիտակից հոգեբանների և փորձագետների հասանելիությունը՝ աշակցություն ցուցաբերելու նպատակով ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում՝ հատկապես Երևանի սահմաններից դուրս:
- Դադարեցնել ներխուժող հարցաքննությունների, հարկադրական առերեսումների, ներթափանցող դատաբժշկական զննությունների և կուսաթաղանթի առկայության ստուգման (հայտնի որպես կուսության թեստավորում) պրակտիկան. բացառել կուսաթաղանթի վիճակից բխեցվող վնասակար և ոչ գիտական հետևությունները. ապահովել, որ անչափահասների մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները պատշաճ կերպով արձանագրվեն (ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում տեսագրում),՝ կրկնակի հարցաքննություններից խուսափելու նպատակով:

## V. Տվյալների հավաքագրման և թափանցիկության ապահովում

- Հավաքագրել և հրապարակել տարանջատված տվյալներ սեռական բռնության գործերի ընթացքի վերաբերյալ՝ ներառյալ դատավարության տևողությունը, վճիռների տոկոսը, պաշտպանական միջոցների կիրառման հաճախականությունը և դատական որոշումների տրամաբանությունը:
- Ստեղծել դատական որոշումների ազգային շտեմարան՝ անհատական տվյալներից զերծ՝ վերլուծությունների, միտումների հետևման և մասնագիտական հաշվետվողականության համար:

## VI. Հանրային իրազեկում և մշակութային փոփոխություն

- Իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ ուղղված սեռական բռնության միջերի կոտրմանը, վերապրածների արժանապատվության ճանաչմանը և հասարակության կրթմանը՝ համաձայնության և սեռական բռնության վերաբերյալ:
- Համալիրել համաձայնության, գենդերային հավասարության և իրավական գրագիտության ուսուցումը՝ դպրոցական ծրագրերում և տարբեր ոլորտների մասնագիտական վերապատրաստման դասընթացներում:
- Ներգրավել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և վերապրածների ցանցերին իրավական բարեփոխումների և իրազեկման նախաձեռնություններում՝ ապահովելով վերապրածների ձայնի կենտրոնականությունը փոփոխության գործընթացներում:

**2025**